

# ՌՈՍՍԱՄ ԶԱԼ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՊ<sup>1)</sup>

(Մոկաց բարբառով)

Գրի առաւ

ԳԱՐԵԳԻՆ ՎԱՐԴ. ՅՈՎԵԼՓԵԱՆ

## ԹՈՍՑԵՄ ԶՈՒ ԽԵԴՈՒՄՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

1.

Ազգերի դրացիութիւնից բղխել է միշտ նոցա փոխադարձ, հոգևոր ազգեցութիւնը։ Հայերը դրացի լինելով՝ Պարսից՝ ենթարկուել են նոցա քաղաքակրթութեան։ զրադաշտական կրօնի հետքերը նկատելի են ոչ միայն հեթանոս հայերի դիցարանութեան, այլ և քրիստոնէական շրջանի մատենագրութեան մէջ։ Պարսից լիզուի և գրականութեան ազգեցութիւնը տեսնում ենք նաև միջնադարեան Տաղարաններում։ Այս փոխադարձ ազգեցութեան շրջանի մէջ է մտնում և ժողովրդական բանահիւսութիւնը։

Պարսից ազգային դիւցազներգութիւնը սիրելի էր Հայերին դեռ ևս Խորենացու ժամանակներից։ պատմութեան նախահայրն ստիպուած էր բաւականութիւն տալ իւր մեկենաս Սահակ Բագրատունու հետաքրքրութեան՝ առաջին գրքի վերջում բացատրելով Բիւրասպ Աժդահակի (Զոհակի) առասպելը \*): Հայերի ծանօթութիւնը Պարսից առասպելների և դիւցազներգութեան հետ՝ պէտք է բացատրել երկու դրացի ժողովրդի փոխադարձ, կենդանի յա-

1) Տես Ազգ. Հանդէս VII—VIII գլքեր.

\* ) Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տվիսիս, 1881, էր. 95—98.

բարերութեամբ և միանգամայն անկախ զրաւոր յիշատակարան-ներից: Որովհետեւ Խորհնացին որ դարու հեղինակ էլ ընդունելու լինինք, աւելի վաղ էր ապրում, քան միրգուսին, իսկ Զ. և է. դարերում արդէն զրի առնուած Պարսից առասպելների յիշատակարանների և Խորհնացու մէջ որևէ չ առնչութիւն դժուար է ընդունել: Կարիք չունէր պատմահայրը թագցնել իւր ազրիւրը, մանաւանդ որ նրան և պարսից յիշատակարաններից հասած համապատասխան առասպելի մէջ արքերութիւն կայ: Մեղ մնում է ընդունել, որ նոքա բերանացի պատմում էին ժադովրդի մէջ և Խորհնացին օգտուել է այնպէս, ինչպէս օգտուել է հայոց ժողովրդական առասպելներից:

## 2.

Արդմօք Հայ ժողովրդի յիշողութիւնից իսպառ անհետացել է Պարսից առասպելների բովանգակութիւնը: Այս հարցին պատասխանելու համար, հարկաւոր է աւելի հիմնաւոր և մասնապետական ծանոթութիւն Պարսից մատհնապրութեան և նոյն իսկ հայ ժողովրդական բանահիւսութեան հետ, քանի մնաք ունինք Ռ'քան բազմաթիւ հերիաթներ, վեցիր զեռ ևս սնձնանոթ են մեր բանահիւներին, զրի առնուած չ'լինելու պատճառով. մի քանի տարի առաջ անյայս էր նոյն իսկ, թէ ժողովրդական հրաշալի վիպական երգեր ունինք, կամ պարսից գիւցազներգութեան այլ և այլ հասուածները տարբեր վարիանտներով և բարբառներով պատմում է մեր ժողովուրդը: Դուքէ նորաներ գիւտեր այս խընդիրը աւելի կ'պարզեն, յամնայն դէպս ուշադրութեան արժանի է և հաւանուորէն նութեան կնիք է կրում այն հանգամանքը, որ ժողովրդի հասկացողութեամբ Պարսից և Հայոց վէպերի հերոսները ցեղակից են զուրս գալիս: Դրաւոր յիշատակարաններից առնուած աւանդութիւններն ու առասպելները գժուար կարծ ժամանակում այն չափով կերպարանափոխ լինէին ժողովրդի յիշողութեան մէջ, որ հերոսների ծագման և հայրենիքի գաղտփարներն իսպառ փոխուէին կամ շփոթուէին: Պարսից վէպի հերոսների և մեր Սասաւ ծուրեր ցեղակցութեան մասին տեղեկացել էինք զեռ ևս 1890 թուին Ապարանի Թաքարլու գիւղում ազգագրական նպատակով կատարած հանապարհորդութեան ժամանակ և 1899 թ. Ալբարատէ-ի փետրուարի տեսրակում մի ծանօթութեան մէջ տեղեկութիւն յայտնել, բայց աւելի մանրամասնութիւններ իմացանք ու. Բազրատ Խոլաթեանի ըլրանի հերոս-

Ները հայ ժողովրդի մէջ՝ \* զգքի հրատարակութեամբ «Բուրգէ» վերնագրով (եր. 24) վիրական հատուածի մէջ Զալը Սասում քաղաքի թագաւորն է, Դաւիթ Զալի եղբայրը, Բուրգէն Դաւթի որդին. Բուրգէի հօրեղբայրն է Յովան, որ երբեմն նաև Զէնով-Յովան (եր. 35) է կոչւում, իսկ Ռուսամը Զալի եղբայրը (եր. 36), Սասումն ծոերի և յատկապէ Զէնով-Յովանի բարձր ձայնով բռուալու, յատկութիւնն ունին նաև պարսիկներից մեզ անցած վէպի հերոսները, Ռուսամ (եր. 37) և Բուրգէ (եր. 38). Զալը և Զմրութ-Ղուշը՝ որ դեր է կտառում ոչ միայն Պարսից վէպի, այլ և մեր հէքիաթիւնի մէջ, երգում են մեր վէպի հերոսների երգման ձևով. «խացն ի զինին, տէր կենդանին» (եր. 37). Այս բոլոր հերոսների հայրենիքը Սասումն է, և նոքա այսահե ևս, ինչպէս և մեր ազգային վէպի մէջ, օտարների աշխատ կոչւում են և Սասումն ծոեր (եր. 25). Մի ուրիշ հատուածի մէջ՝ «Բուսամի» Զալը վերնագրով, որ պ. Խալաթեանը զրի է առել Ապարանի Զամբրու գիւղում, Ռուսամն իրեն Սասումնը է (եր. 74) անուանում է Կարմիր Դեկց յափշտակած աւարը Սասումն տանում (եր. 76). Այսպիսով տեսնում ենք, որ պարսից վէպի հերոսները հայցած են և ազգակցական նեղ կապերով միացած մեր ազգային վէպի հերոսների հետ, մի երեսոյթ, որ ինչպէս վերև յիշեցինք արժանի է խորին ուշազրութեան և գուցէ հութեամբ միայն կարելի լինի բացատրել,

## 3.

Փոքը ինչ տարրեր, բայց այլ տեսակէտով զարձեալ մի շատ կարևոր երեսյթ նկատում ենք Ռուսաց ժողովրդական բանահիւսութեան մէջ, որ իրեն լուսաբանութիւն, հորկ ենք համարում համարում համաստ կերպով ծանօթացնել ընթերցողներին: Ցեղակից ազգերի մէջ ժողովրդական բանահիւսութեան, յատկապէս վիրական ստեղծագործութիւնների, փոխառութիւնը բացառիկ երևոյթ չէ. գերմանական ցեղերի վէպերը շատ մեծ կազ և նմանութիւն ունին միմնանց հետ, Այդ նմանութիւնը բացատրւում է երեք տեսակէտով. առաջին՝ ցեղակից ազգերի մէջ որոշ տարրեր, մանաւանդ զիցարանական պատկերներ և կրօնական հաւատալիքներ, ընդհանուր են եղել բոլորի համար զետ և սրանց բաժնութիւնից առաջ և այդ տարրերն արտայայտուած ենք գանում վէպի մէջ, Երկրորդ՝ նմանութիւնների մի մասը բացատրւում է մարդկային հոգու մատածողութեան և զարգացման որէնքնների միա-

\*) Պարիս, 1901 թ.

տեսակութեամբ և երրորդ՝ փոխառութեամբ։ Այս երրորդ տեսակն է պատկանում Բուռաց Երուալան Լազարեվիչի վեպը, որ Ժէ. գարու մի ձեռագրից հրատարակել է Ն. Ի. Կաստամորով Պամանիկ տարիում Շոյն վեպի մի ուրիշ վարիանտ և աւելի պակաս ազնատուած՝ դարձնալ Ժէ. գարու ձեռագրից, հրատարակել է Վ. Մ. Ռենդուսկի Հետօնութեամբ Առաջնամասի Առաջնամասի մէջ յիշուած երկրորդական անուններին։ Առուալան գործում է Կիրկոսու Կիրկոսանովիչ թագաւորի ժամանակ։ Նրա վիճաւոր թշնամին Դանիիլ Բէլիխ է, Առուալանի ձին կոչում է Արագ։ Ըստ Սասասովի Կիրկոսու Շահ-Նամէի Կառ-Կառուն է, նորա հայրը Կիրկոսան Կառկորդ, Դանիիլ Բէլիխ համապատասխան է Սպիտակ Դէիխն, ձին Արագը Բախչին, իսկ Առուալանը՝ Բուռուեմին։ Օրեամ Միւրեր իւր ընդարձակ աշխատութեան մէջ Ալեք Մյորուեց և Յօրագործու Քյայսեր, Սամականու մէջ ոգտուում ենք և մենք, աւելացնում է, որ թէն լեզուարանորէն Առուալան համապատասխան չէ Առուալ անուան, բայց հաւանորէն խառնուած է թաթարական Արալան անուան հետ, և հետզհետէ փոփոխուելով՝ Առուալան անունն է յառաջ եկել։ Անունների այսպիսի զուգադիպութեան հետ բովանդակութեան աշքի ընկնող նմանութիւնը, պատմուած երբեմն նոյն իսկ նման հասելզականութեամբ, պարզ ցոյց է տալիս, որ այս վեպը փոխառութիւն է Շահ-Նամէից, չհայելով տարրերութիւններ ևս կան։

## 4.

Այսպիսի մի փոխառութիւն է Շահ-Նամէից նաև մեր զրի առած Ռուսամ-Զալը. որպէս ապացոյց այսուեղ ևս կարող ենք յիշել ոչ միայն անունների և բովանդակութեան, այլ և յաճախ գէպքերի հատևզականութեան նմանութիւնը։ Ի՞նչ ճանապահներով է Շահ-Նամէի բովանդակութիւնն անցել մեր ժողովրդին, չենք կարող ասել, արդեօք Շահ-Նամէի ընթերցանութեան ժամանակ ժողովուրդն անկնդիր է եղել, թէ ընթերցողներն իրենք պատմել են ժողովրդին, Չգիտենք։ Կարող է պատահել նաև, որ Հայերը թրգերից իւրացրած լինին, քանի որ նրանց մէջ ևս պատմում է այս վեպը քրգերէն լեզուով։ Խնդրի լուծումն աւելի

ևս գժուարանում է, երբ յիշենք, որ մեր ժողովրդի մէջ ունինք նոյն վէտի այլ և այլ հատուածներ, որոնք միանդամայն տարրեր են Շահ-Նամէի համապատասխան մասերից 1), ինչպէս և իցէ, ժողովուրդը իւրացնելով Շահ-Նամէի որոշ մասերի բռվանդակութիւնն, ինքն հիւսել, մի նոր վէտ է կազմել, Մեր զրի առած ընոստամ-Զալը վերանդրով վէտի մէջ պատմուած են միայն Կաւ-Կորազի, Կաւ-Կառուասի և Սյամուշի հատուածները մինչեւ Կաւ-Խորովի թագաւորութեան սկզբը, բայց շատ տարրեր եղանակով, հիւս-սուածքներով և կազմակցութեամբ, քան Ֆիրզուառու Շահ-Նամէի մէջ, Այսունզ պահառում են ընականարար նախ հերոսների ըն-դարձակ նամակագրութիւններն ու բանախօսութիւնները, որոնք աւելի բանաստեղծի երեակայութեան և ստեղծագործութեան ար-դիմք են, քան բուն, ժողովրդական վէտի մասեր։ Փոխառութիւնը կատարուած է միայն հական, բուն վիճական մասերով, յանախ աղրիւրի պատմաքից տարրեր կազմութեամբ, հայեացներով և շարայարութեամբ։ Մի հատուած, որ Շահ-Նամէի մէջ ուրիշ կա-պակցութեան մէջ է պատմուած, այստեղ միացած է բոլորովին այլ պատմութեան կամ հատուածի հետ։ Ուրիշ կերպ էլ սպասել չէնք կարող ժողովուրդն իւր ստացած նիւթը կրնատել կամ աւելացրել, փոփոխել և դասաւորել է իւր հայեացների, ճաշակի և զեղարուեստական հակումների համեմատ։ Ցիշողութեան շփո-թութիւնն էլ անշուշտ իւր զերն է կարուել։

Կարդալով Ֆիրզուու Շահ-Նամէն, ընթերցողը նկատում է, որ այդ գիւցազնիրդութիւնը ներկայ կազմութեամբ, որքան և ժողովրդական իւր ընդարձակ նիւթով և հիմնական զազափար-ներով, գեղեցկութիւն և կենցանութիւն է ստացել բանաստեղծի երեակայութեան և ստեղծագործող տաղանդի շնորհի։ Ներսաների այնպիսի ընդարձակ ատենաբանութիւններ և նամակագրութիւններ, ինչոյնքների, երբեմն և ընութեան սենաբանների նկարագ-րութիւններ, կեանքի անցաւորութեան մասին վիլխափայական զատողութիւններ ուրիշ ազգերի բուն ժողովրդական բանահիւսու-թեան մէջ չենք գտնում։ Արևելեան և արևմտեան ազգերի ժո-ղովրդական վէտերին յատուի է հօր և որդու մենամարտութեան միշնադէպը, բայց որ ազգի վէտի մէջ պատմութիւնն այնպիսի դօրեղ ողբերգական-ճակատագրական բնաւորութիւն է ստանում, ինչպէս Ֆիրզուու Զօհրար հատուածի մէջ։ Այս ինչ թուսամ-Զալի. մէջ ամենայն ինչ անարուեսա է, պարզ։ Հինց այդ պար-զութեամբ էլ գեղեցիկ է և ժողովրդական։

1) Տես մեր վէտի և 2. գլուխեց և Բ. Խալաթեանի երանի հերոսները հայ ժողովրդի մէջ, Պաշտ. 1901

Ռուսամամատառին է Շահ-Նամեկից, թայց ժողովուրդը իւրացրել է այն իւր հոգու պահանջներին համապատասխան չափերով և վերաբռնագրել, հիւսել բան ժողովը գալածն, վիպական ձեռերով և հայեացքներով հայ ժողովրդի երեսակայութիւնն ու սահզծագործող հոգին իւր զրոշմն է ինքել ծագումով օտար այս վէտի վերայ. նա է սահզծել այն կենդանի, հակիրճ, թայց գորաւոր արտայատութիւններով վիպական շնորհն, որ հրճանանք կարող է պատճառել ժողովրդական բանահիւմութեան մասին ճաշակ և հասկացողութեան ունեցող ընթերցողին և զուրկ կենդանութեան, պատկերաւոր արտայատութիւնների, բան վիպական նկարագրութիւնների և ժողովրդական հայեացքների արտայատութեան կողմից մեր ազգային բանահիւմութեան գեղցիքի սահզծագործութեաններից մէկը պիտի համարել այս վէտը, թէն կմախքն օտարինն է:

## 5.

Ռուսամամատառին համապատասխան մասերի համառ բովանդակութեան համեմատութիւնը աւելի կ'պարզէ նոցա մէջ եղած առնչութեան չափը: Խնչպէս յիշեցինք Ռուսամամատառին համեմատութիւնը ամբողջութեան ամփոփումն չէ. այստեղ պատմուած են միայն Կաւ-Կորագի, Կաւ-Կաւուսի և Սիավուշի վէտերը մինչև Կաւ-Խոսրովի թագաւորութեան սկիզբը, թայց ոչ համապատասխան բոլոր մասերով. Կաւ-Կաւուսի Մազանդարան գնալու և Ռուսամամի եօթն արկածների մասին ակնարկութիւն անզամ չ'կայ: Այս բոլորի մէջ կեղործնական անձնաւորութիւնը Ռուսամամի է, միւսների անունն ու գործերը յիշուած են, կարծես, միայն հերոսի պատկերն աւելի պայժառապացնելու համար, ուստի և իրաւամբ այդ վէտը Ռուսամամի անունն է կրում ժողովրդի մէջ: Հէնց այս հանգամանքն ինքնըստինքեան մի շեղումն է Շահ-Նամեկից:

Ռուսամամատառի Ա. զուտիը միւս մասերի համեմատութեամբ աւելի մօտ է Շահ-Նամեկին, թայց այստեղ ևս նկատում է այն մեծ տարբերութիւնը, որ ակնարկեցինք նախընթաց պրակի մէջ:

Առաջին գլխի առաջին հատուածի (եր. 3) բովանդակութիւնը Աֆրասիաբի և Քաւղըբաթի (Կաւ-Կորագ) մէջ ծագած պատերազմի սկզբնաւորութիւնն է. Քաւղըբաթ յաղթուած, փախել է, երկիրը մնացել է թշնամու ձեռքը: Հէնց այս սկզբնաւորութիւնն արդէն միանդամայն տարբեր է Շահ-Նամեկից. Աֆրասիաբ արշաւել է իրան այն ժամանակ, երբ մեռել է իրանի վերջին թագաւորը Զէվ և երկիրը մնացել է անտէր: Կաւ-Կորագ

ըստ Շահ-Նաւամէի թուրանցոց հետ պատերազմի մէջ է մտնում աւելի յեռոյ, երբ Ռուսական նորան էլլրուրս սարից իրանցոց բանակն է տաճում, ժողովուրդը բանաստեղծական հատառութեամբ շեղուել է իւր ազրիւրից, հերոսին երկրի ամենազժբարդ ժամանակ հանգէս բերելով, որով և ասանձին վիպական կենգանութիւն է տուել սկսուածքին:

Ռուսամ-Զալի Ա. Գլխի երկրորդ պարբերութեան մէջ պատմուած է, թէ ինչպէս Զալը փորձում է Ռուսամէի տղամարզութիւնը և ինչպէս վերջինս իւր համար մի է ընտրում: Համեմատելով այս հատուածը Շահ-Նաւամէի համապատասխան մասերի հետ, ուրգում է, թէ ժողովուրդը Շահ-Նաւամէից փոխ առած նիւթը մրչափ ազատ կերպով նորից ստեղծել և ամբողջութիւն է կազմել: Չըոյցի էական իմաստը երկու տեղն էլ նոյն է և այդ է իսկապէս նոցա մէջ եղած նմանութիւնը, բայց որքնն տարբեր կերպով է պատմուած և ձևակերպուած այդ մի նոյն պատմութիւնը երկու երկերի մէջ, ժողովրդականը շատ պարզ է և նկարագրուած ընդամենը մի քանի տողով, այն ինչ Շահ-Նաւամէի մէջ երկար ու բարակ պատմուած է, թէ ինչպէս Զալի մահուանից յետոյ երկիրն անաէք է մնացել և Աֆրատիար մեծ զօրքով արշաւել է Իրան: Մեծամանճերը հաւաքուել են Զալի շուրջը և հնարք են խնդրում երկրի փրկութեան համար: Զալը յիշում է իւր երիտասարդական քաջութիւնները, բայց այժմ եերութեան պատճառվ թոյլ է և անզօր թշնամու դէմ մաքանելու: Սակայն մի նորարարոջ ոտ է բուսել նոյն արամատից և այդ ոտն Ռուսամէն է, որ թէն մանուկը, բայց նոնու բարձրութիւն ունի: Խոստանում է որդու համար փղի զօրութիւն ունեցող մի ձի գտնել և ներշնչել նորան Իրանի մեծամանճերի հետ թշնամու դէմ մարտնչելու: Այսուհետեւ մի երկար տրամախօսութիւն է սկսում հօր և որդու մէջ: Զալը մի կողմից որդու նորատի հասակն է յիշեցնում, միւս կողմից վասում թշնամու դէմ: Ռուսամ պատասխանում է նորան իրդախ խօսքերով: Նա փափուկ կեանքի և պինու սիրահար չէ, այլ վրէժխնդիր է կամենում լինել: Նա յոյս ունի, երբ լարի իւր աղեղը, կատարենից աստղեր կ'թափուին, վազրի և ընձի կաշուց պահպանակ հագնելով, ման կափորի ամեն տեղ, իսկ ձին տիրոջ զարին ու թների զօրութիւնը տեսնելով՝ աներկիւղ կ'դառնայ: Ռուսամ հօրից բլուրի նման մի ձի է ուզում, յերան կտորի նման մի գուրզ, որով թուրանցիների զլուխը ջարդել և արեան զետեր հոսեցնել կարողանայ, ուզում է վազրի մորթուց պարաստած մի զրահ, որ կրակից անվնաս մնայ և ջրից անթափանաց, իսկ նիզակն ու նետը ծակել չ'կարողանան:

Այս բնութարձակ տրամախօսութեան հետևում է ձիու ընտրութեան նկարագրութիւնը Ռուսամի առաջն են քերում Զարուիլի և Թարուլի բոլոր երամակները. նա մէկ մէկ իւր ձեռքը զնում է ձիերի մէջքին, բայց բոլորն էլ ճկուում, փորերը գետնին են տալիս, Վերջապէս անցնում է մի մատակ և նրա յետեւց մի քուռակ, որի յատկութիւնները նկարագրուած են ընդարձակ կերպով. Ռախչն է այդ քուռակը: Ռուսամը պարանը ձգում է նորա պարանոցը. մայրը վրայ է համսում և կամենում է ատամներով պոկել Ռուսամի գլուխը, բայց զիլին բռունցք ստանալով, փռում է գետին: Ռուսամը պինդ քաշում է քուռակին և ձեռքը նորա մէջքին սեղմաւմ, բայց չի ճկում<sup>1)</sup>:

Այս համեմատութիւնից ընթերցողն ինչնին տեսնում է, թէ ժողովրդականն ինչպէս տարրեր է Շահ-Նամէից: Համեմատարար աւելի նմանութիւն կարելի է գանել ձիու ընտրութեան պատմութեան մէջ, բայց այդ նմանութիւնն էլ նորանով պէտք է բացատրել, որ Շահ-Նամէի այդ հատուածը բռն ժողովրդական առապելի վրայ է հիմնուած: Հերոսների ձիու այդ տեսակ ընտրութեան հզանակը յատուկ է ժողովրդական վէպին: մեր Դաւիթն էլ նոյն ձեռք է ընտրում իւր Քուռիկ-Զարային<sup>2)</sup>: Դեռ կարող ենք ասել, թէ Ռուսամ-Զալի այդ կողմից աւելի մօտ է Սասամյ Մոերին, քան Շահ-Նամէին: Վերջնին մէջ պակասում է Բախչի ծովային ծագում ունենալը, այն ինչ այդ զիծը բռն ժողովրդական է<sup>3)</sup>. Պակասում է այնտեղ նաև ձին հրաշալի կերպով պայտելու պատմութիւնը (եր. 4—5):

Այսուհետեւ, եթէ առաջ տանենք մեր համեմատութիւնը, կը տեսնենք, որ Ռուսամ-Զալի մէջ փոխուած է նախ պատմութեան հետեղականութիւնը. Կաւ-Կարագի երազն աւելի առաջ է պատմուած, քան Շահ-Նամէի մէջ, կերտնն ուշարկուում է Իրանցիների գէմ Ալբուրսից վերադառնալու ժամանակի Անշուշառ ժողովրդականն ըստ էռութեան յիշեցնում է ազրիւրը: բայց պատմուած է տարբեր ձեռք և կապակցութեամբ: Բացի գորանից Ռուսամ-Զալի մէջ մտել են մի քանի այնպիսի գծեր և մանրամասնութիւններ, որ յատուկ են ժողովրդական վէպին: Զալի ուրախութիւնն ու հերոս որդու սպառապինութիւնը նկարագրուած է հակիրճ, բայց

<sup>1)</sup> Համեմատութիւնը կատարեւմ ենք ընդհանրապէս Զալի զերծանելը թարգմանութեամբ, երբեմ օգտակար նույն պ. Դիլլազենին հատուածական թարգմանութիւնից:

<sup>2)</sup> Սահմայ Եռեր եր. 105—106.

<sup>3)</sup> Սահմայ Եռեր եր. 63—64. Буслаевъ. Исторические очерки русской народ. словесности и искусства. Т. I. ер. 409.

կենդանի և վիրտուկան բանառանգծութեան բոլոր կատարելութեամբ։ Ռուսամի զէնքերն են, ինչպէս մեր Դաւթինը, Զալ հանում է անդուիից՝ հակառակ Շահ-Նամէի, ձիռ զարդարանքը նման է Թու-սիկ-Զալալու։<sup>1)</sup> կամ Ասլան աղի Բող-բէկուու։<sup>2)</sup> զարդարանքնե-րին, պատուիրակութիւնը իւր կրկնութիւններով բուն ժողովրդա-կան է։ Ռուսամ Նէյլունի հետ պատերազմնելուց առաջ, որ հերոսի առաջին պատերազմն է, ջուր է խօսւմ աղբերից և ապա բիշ յետոյ ըլնցկուն լցուաւ, Ըստոր մազիր զրեխէ շապիկն իտու տիւս, մի զիծ, որ նկատուած ենք նաև մեր Դաւթի կենաքի մէջ ։<sup>3)</sup> Ռու-սամի մնամարտութիւնը Նէյլունի և նորա զօրքերի հետ ատր-քեր է Շահ-Նամէից։ Ռուսամ են, ինչպէս մեր Դաւթ, կենդանի մնացած երկու թշնամիների ատամները քաշում և ճակատներին է շարում, որ թագուորին լուր տանեն։<sup>4)</sup> այն ինչ Շահ-Նա-մէում այզպիսի բան չկայ։

## 6.

Ռուսամ-Զալի Բ. գլուխը բաղկացած է երկու մասից, ա-ռաջին մասը եր. 10—12 առնուած է Շահ-Նամէի Զոհրաբ վէպից, իսկ մեսացածը եր. 12—19 Բուրդոյ-Նամէից։ Բայց ժողովութը երկու տարրեր զրքերից առնուած վէպերը միացրել և մի ամ-բողջութիւն է կազմել, հետեւով ծննդարանական հետևողակա-նութեան։

Զոհրաբի վէպը, որ Շահ-Նամէի ամենից գեղեցիկ և ըն-դարձակ մասերից մէկն է, շատ համառու է և ցամաք Ռու-սամ-Զալի մէջ։ պարզ պէտք է լինէր հաւանօրէն նաև Շահ-Նամէի հմաք կազմող պարսից ժողովրդական վէպին յատուկ մի զիծ է հօր և որդու մնամարտութիւնը, որ հանդէս է զալիս շատ աղ-գերի վէպերի մէջ այլ և այլ հզանակաւորութիւններով, բայց ոչ մի տեղ չենք տեսնում այն հոյակապ վեհութիւնն ու զրաւիչ զո-րութիւնը, ինչպէս Ֆիրդուսու երկի մէջ, Երշենք Ռուսաց Իլիա Մուրոմցու և Սոկոնիկի, կելտական Կլիզամորի և Կարտոնի, գեր-մանական Հիլդեբրանդի, Բիւզանդական Անդրոնիկոնի և իւր որ-դու կափւը, վերջապէս մեր աղգային վէպի մէջ Դաւթի և Մէկը մնամարտութիւնը։ Այս վերոյիշեալ վէպերից ոչ մէկը հօր և

<sup>1)</sup> Սուսմայ Եռեր եր. 106.

<sup>2)</sup> Փշտիկներ ժողովրդ, բակահիւսութիւնից եր. 8.

<sup>3)</sup> Սուսմայ Եռեր եր. 109.

<sup>4)</sup> Սուսմայ Եռեր եր. 102.

որդու մենամարտութեան տեսակէտով համաշխարհային մատենագրութեան մէջ այնպէս նշանաւոր չէ հանդիսացել, ինչպէս Զոհրաբի վէպը, և այդ շնորհիւ մեծ բանաստեղծի տաղանդի, որ կարողացել է ժողովրդական պարզ նիւթից այնպիսի հոյակապ, զեղարսեստական կատարելութեամբ հիւսուած, ողբերգականակատագրական մի վէո ստեղծել: Սորանով ի հարկէ չենք կամուռու ժխտել, թէ հենց Ֆիրդուսու աղբիւրի մէջ կարող էր լինել այն ճակատագրական-ողբերգական տարրը, որ եղերերգական վախճան է տալիս վէպին և այնպէս սրտաշարժ գարձնում: Այս զիծը նկատելի է նաև ուրիշ ազգերի մէջ, թէ և առարեր եղանակաւորութիւններով, օրինակ կելտական Կլիզամոր և հարուսոն վէպի մէջ: Այսուեղ ևս, ինչպէս Շահ-Նասեկի մէջ, որպին զգում է, որ հակառակորդը կարող է իւր հայրը լինել և աշխատում է իմանալ նորա անունը, բայց ի զուր: Հայրը նոյնպէս ազտա չէ այն նախազգացումից, թէ որդու հետ է մենամարտում: Այսուեղ ևս հայրը մօս է յաղթուելու, ջարդուել է նորա նիզակը, յափշտակուած է սուրը, որդին պատրաստում է կապել հօրը, բայց վերջինն բաց տեղ նկատելով որդու կողքին, մահացու հարուստ է տայիս: Մահուան վերջին բոպէին միայն որդին յայտնում է իւր ով լինելը, Վշտարեկ հայրը խոնարհում է որդու զիտիկ վրայ: երեք օր իւրայինների հետ սուզ է պահում և վախճանում չորրորդ օրը, անկարող լինելով տանել այդ վիշտը<sup>1)</sup>: Միթէ պակաս ճակատագրական տարր է կրում մեր Դաւիթ և Մհեր վէպը: թէպէտ հօր և որդու մենամարտութիւնը մահուամբ չէ վերջանում մեր վէպի մէջ, բայց ինչըմն ճակատագրական-ողբերգական է Դաւիթի անէծը: անմասի ընիւս, անժառանգ: Բայց և այնպէս, կրիսում մնի, այս վէպերից ոչ մէկը չի համուռ Շահ-Նասեկի Զոհրաբին, որովհետ ժողովրդական պարզ նիւթը բանաստեղծի տաղանդի շնորհիւ զեղարսեստական այլ կերպարանը է ստացել:

Այս բացատրութիւնից յետոյ հասկանալի պէտք է լինի, թէ ինչժմ Ռոստոմ-Զալի մէջ այնքան պարզ ու համառա է Զոհրաբի վէպը: Ժողովուրդը Շահ-Նասեկի արուեստական մասը չէ իւրացըել, այլ հաւատարիմ իւր վիպական աւանդութիւններին, վերաբազրել է այն շատ անդամոյն կերպով, յահախ կրնատելով նոյն իսկ վիպական մասերը կամ շեղումներ կատարելով աղբիւրից: Ժողովրդականի մէջ չէ նկարագրուած Ռոստոմի որսի գնալը

<sup>1)</sup> Илья Муромецъ и Богатырство Кіевскога Ореста Маллера С. П. 1869, եր. 7—11.

և մի ամբողջ ցիռ խորովել, ուտելը, քնելը, Թուրանցիների Բախշը փախցընելը, Ռոստամի Սիմենկան գնալը, թագաւորի ինջոյքը, Շահ-Նամէից տարրեր են նոյնիսկ Ռոստամի ամուսնութեան, Զոհրաբի ծննդեան և աննպեան պարագաները։ Զոհրաբի երեխայութեան չարութիւնները, յիշեցնում են մեր Դաւթի չարութիւնները, որ Շահ-Նամէում չկայ, ինչպէս և Զոհրաբի ամուսնութիւնն ու հրաժեշտի ժամանակ կնոջը բարպահոց տալը։ Այս վերջին երկու կէտերը գուցէ առնուած են Բուրզոյ-Նամէից, Ժողովրդականի մէջ հայր և որդի անմիջապէս իրեւ ախոյեաններ կանգնում են իրար զիմաց, որովհետո չէ պատմուած ոչ Զոհրաբի ձի ձեռք բերելը, ոչ Աֆրամիարի նամակը, ոչ Սովոր բերդի պաշարելը ու Հեղիրին բանելը, ոչ Դուրզաֆրիդի հետ ունեցած մենամարտութիւնն ու սիրահարութիւնը, շահի նամակն Ռոստամին, գտութիւնն ու հաշուութիւնը երկուուի մէջ, Ռոստամի ծպտեալ կերպով թշնամութանակ մանելը, Զոհրաբի հարց ու փորձը Հեղիրից Ռոստամի նշանների մասին և նորա նպատակաւոր ուսւա պատասխանները, Զոհրաբի մէջ յառաջ եկած նախազգացուումը, թէ ախոյեանը իւր հայրն է և Ռոստամի խուսափազական պատասխանը, որով վէպն հետզհետէ աւելի և աւելի ողբերգութան-ճակատագրական է զառնուած, Ռոստամի սուզն էլ Ժողովրդականի մէջ միանգամայն տարրեր է Շահ-Նամէից, թէ զարձեալ հզօր կերպով արտայայտուած խոցուած հօր ցան ու վիշտը, Միակ նամանութիւնն անունների մէջ է և պատմութեան էութեան մէջ, այսինքն թէ որդին սպանուած է հօր ձեռքով։

Ռոստամ-Զալի Բ. գլխի մեացած մասը, այն է 12-19 եր., ինչպէս յիշեցինք, փոխառութիւն է Բուրզոյ-Նամէից։

Շահ-Նամէն Ֆիրզուու տարանդի շնորհիւ կարճ ժամանակի մէջ մեծ հեղինակութիւն է սահանում արեւելքում, յատկապէս Պարսից և Տաճկաց մէջ, և անազին գրականութեան առիթ զառնուած։ Պարսից շատ բանաստեղծներ ընդարձակ գիւցաններութիւններ են զրուած Ֆիրզուու նմանողութեամբ, որոնց գործող անձինք առնուած են Շահ-Նամէից կամ ցեղակցութիւն ունին Շահ-Նամէի հերոսների հետ, Այդպիսի վէպերից են Բուրզոյ-Նամէ, Սամ-Նամէ, Ֆիրամուրզ-Նամէ, Շահրիար-Նամէ, Զիհանդիր-Նամէ և այն։ Ցիտականներից ունանը<sup>1)</sup>, մանաւանդ հները, հակուած են ընդունելու, թէ այս վէպերի նիւթը զարձեալ Ժողովրդական է, ինի աւանդութիւնների և զրոյցների վերայ հիմուած, այն ինչ նեղզըքէն<sup>2)</sup>, որ մեծ

<sup>1)</sup> Chack, Heldensagen von Firdusi, Berlin, 1865 Einleitung եր. 33.


<sup>2)</sup> Das Jranische Nationalepos, Strassburg, 1896.

հոչակ է վայելում Եւրոպայում արևելապիտութեան մէջ, բացարձակապէս այդ բողոքն էլ բանաստեղթների երեակայութեան արդիւնը է համարում կամ Շահ-Նամէի նմանողութիւնն. Բուրգոյնամէն, որ յիշեալ վէպերից լաւագոյնն է, զրուած է ԺԱ. զարում. բովանդակութիւնը շատ նման է Շահ-Նամէի Զոհրաբ վէպին, այն տարբերութեամբ միայն, որ Բուրգոն չի սպանուամ ոչ ֆարանուրդից և ոչ Ռոստամից, որոնց հետ մնամարտում է նու:

Թողովրդական վէպերի մէջ հօր և որդու մնամարտութիւնը միշտ որդու մահով չէ վերջանում, այլ երբեմն յայտնում է մնամարտողների ցեղակցութիւնը, և այսուհետև կոփէր համրոյրների և ուրախութիւնների է փոխում. Օրեսու Միլիերը իւր ընդարձակ աշխատութեան<sup>7)</sup> մէջ ճգնում է հաստատել այն միաբը, թէ հօր և որդու մէջ եղած կախներից մահուան վերջաւորութիւնը ննագոյնն է, իսկ հաշտութիւնն ու փոխազարձ քննոյց արտայայտութիւնները բարբերի մեղմութեան նշան, ուրեմն և համեմատարար աւելի ուշ ժամանակի արդիւնք. Ռուսաց վէպերի մէջ երկու վերջաւորութիւններն էլ պատահում են. Իլիսա Մուրոմցու մէջ Սոկոնիկը սպանուած է, այն ինչ Շահ-Նամէից փոխ առնուած Աւրուլզն Զալագարենիչի մէջ հայրը ճանաչում է որդուն իւր թողած գոհարով և հաշտութեամբ է վերջանում. Միլիեր ենթագրում է, որ գերմանական Հիլդերդանդ երգի մէջ, զրուած ը. զարում, բայց տարաբազարարար թերի հասած մեր ձեռքը, մնամարտողներից մէկի մահով պիտի վերջանար, այն ինչ մէ. և ԺԵ. գարերում զրուած վէպերի մէջ հաշտութեամբ է վերջանում. Մեր ազգային վէպի մէջ և՛ Դաւթի և Մհերի մնամարտութիւնը մահուամբ չէ վերջանում, թէպէտ հնութեան և բարբերի խստութեան զրոշմը մեացել է Դաւթի տանմախի իս, անժառանգ մնաս անէծքի մէջ, Բուրգոյնամէն նմանողութիւն լինելով Զոհրաբ վէպին, այս ինչպրում զանազանուած է նորանից, որ պահպանուած է նաև ժողովրդական Ռոստամ-Զալի մէջ.

Բուրգոն Զոհրաբի որդին է, որ ծնուած է զեղեցիկ Շահրուդից. Զոհրաբը Իրանի դէմ սկսած արշաւանքից առաջ սիրոյ յարաբերութիւն է սկսում Շահրուդի հետ և բաժանուելու ժամանակ մի մանեակ է թողնում նորան, որ կրում էր այսուհետև իւր կրծքի վերայ. Միրոյ այս յարաբերութիւնից ծնւամ է Բուրգոն, որին մայրը մինչև քառա տարեկան հասակը մեծացնում է անյայտութեան մէջ, վախենալով, որ նա Զոհրաբի վրէժը կ'լուծի Ռոստամից. Ի վերջոյ Աֆրասիաբն ընդունում է նորան իւր պալատում

<sup>7)</sup> Խան Մորոմեց և այլն:



և ապա Իրանի գէմ ուղարկում: Բուրգոն գերի է ընկնում, յայտնը ում է նորա ծագումը և այսուհետեւ բազմաթիւ արկաններ է ունենում, որոնց մասնակից են Շահ-Նամէի հերոսներից շատեցը:

Այս համառօտ բովանդակութիւնը, որ մնեք քաղում ենք Շակի յիշեալ երկից<sup>1)</sup>, բաւական է տեսնել, որ Ռոստամ-Զալի վերոյիշեալ մասը (եր. 12—19) փոխառութիւն է Բուրգոյ-Նամէից: Տարարագգարար ձեռքի տակ չ'ունինք այդ վէպի թարգմանութիւնը, որպէս զի տւելի մանրամասն համեմատել և կախման չափը սրոշել կարողանայինք:

## 7.

Ռոստամ-Զալի Դ. գլուխը, վէպիս ամենագեղեցիկ մասը, համապատասխան է Շահ-Նամէի Ռոստամի սրորդութիւնը Թուրանում հաստատին: Սակայն ինչպէս նախոնթաց գըլուիներում, այսանդ ևս ոչ միայն տարրերութիւններ կան, այլ ամբողջութիւնն հիւստած է ապատ և համարեա անկախ Շահ-Նամէից: Նախ ամբողջութեան մէջ չի պահուած Շահ-Նամէի յաջորդականութիւնը: այնանդ առաջ որսորդութեան տեսարանն է և ապա Զո՞նրարի վէպը, իսկ այսանդ ընդհակառակն: Երկրորդ՝ տարրերութիւններ կան նաև բովանդակութեան նկատմամբ: Շահ-Նամէի մէջ պակասում են Թուրանի թագաւորի հարց ու փորձը վեզիրներին, Գեի շահատակութիւնները, Ռոստամի ուսելուց յետոյ՝ անփոյթ հերպով քնիլը, Ֆիլասըմին սպանելը, Ըստ Շահ-Նամէի Պիլսեմ (Ֆիլասըմ), Փիրանի եղբայրն, սպանուում է ոչ այսանդ, այլ շատ յետոյ, երբ Իրանցիք Սիավուշի արեան վրէմն են առնուած Թուրանցիներից: Ալկուսի պատմութիւնը ձուլուել է Ֆիլասըմի պատմութեան հետ: Երկրորդական տարրերութիւնները գանցառութեան տալով, յիշենք նաև, որ Շահ-Նամէի մէջ չկայ ոչ դիմի և Ֆիլասըմի մնամարտութիւնը և ոչ Հըմանի պատմութիւնը: Հերոսների պայքարը Ռոստամ-Զալի մէջ նկարագրուած է ինքնուրոյն և ժողովրդական: Կաւ-Խոսրով (Քաւ-Խոսիր) այս պատերազմին մասնակից չէ, այն ինչ Ռոստամ-Զալի մէջ պատերազմը նորա մասնակցութեամբ է վերջանում: Ռոստամ-Զալի պատմուածի Յեսվանը կամ նորա վարպետը Կաւ-Խոսրով անունը շփոթել է Կաւ-Կաւուս անուան հետ:

## 8.

Չորրորդ զլուխը Սիավուշի և Սուրաբէի սիրահարական ար-

<sup>1)</sup> Einleitung, եր. 33. Ժանօթութիւն.



կածների, Միավուշի մահուան և նորա որդու կաւ Խոսրովի ազատութեան և թագաւորութեան, Շահնամէի երեք մեծ վկաների, ազգեցութեան արձագանքն է. արձագանք ենք անուանում, որովհետեւ ժողովրդական վերաբռագրութիւնը միանգամայն տարրեր կազմութիւն ունի, քան Շահնամէի համապատասխան մասերը: Միավուշի մօր (Սուլաբէի) սիրահարութեան պայմանները, Միավուշի Թուրանում բնակութիւն հաստատելու, ինչպէս և նորա սպանութեան պատմութիւնը. Դեմի հանդիպումը Քեռաւիսրի (Կունարովի) հետ ոչ մի նմանութիւն չունեն Շահնամէի հետ: Միավուշի բանսարկուն ըստ Շահնամէի ոչ թէ հմանն է, որ Խոստամ-Զալի մէջ երեսում է որպէս չարութեան տիպար, հակառակ բարի և իմաստուն Փիրանին, այլ Աֆրասիարի եղբայր Փիրսիզէս: Հըմանը Շահնամէի մէջ մի համակրելին հերոս է և հանդէս է զայս միայն Միավուշի վրէժը լուծենու համար ծագած պատերազմի մէջ, եթէ չ'յիշենք նորա նշնին զերը Զոհրարի վկանում:

Խոչ որ ասել ենք Զոհրարի վկափի մասին, նոյնը կարող ենք կրկնել նաև Շահնամէի այս երեք՝ բովանդակութեամբ միմենց հետ կապուած և մի ամերողջութիւն կազմող՝ վէտերի մասին: Այստեղ ևս, ինչպէս և Զոհրարի վկափի մէջ, բանսատեղծի տազանդը կարողացել է ձեռքի տակ եղած պարզ նիւթից այնպիսի մի հրաշալի գործ ստեղծել, որի նմանը դժուար է գտնել ուրիշ ազգերի ժողովրդական, վիպական բանսատեղծութեան մէջ: Միավուշի բազգը կապուած է մի հակառագրական օրհասի հետ գեռ ևս ճնուելուց առաջ. Գողարզ և թում պատրաստ են իրար խողխողել նորա մօր համար, մանուկը մնաւում է հայրենական անից գուրս Խոստամի իննամատարութեան տակ, հազիւ պատանեկութեան հասակին հասած՝ Սուլաբէի՝ խորթ մօր, սիրոյ թակարգները լարում են նորա զէմ: Բայց մաքրութիւնն ու առաքինութիւնը յադթող են հանդիսանում յանձին Միավուշի: Զարմանալի վարպետութեանը բառած բանսատեղծը նկարագրել է սիրուց առջարուուղ Սուլաբէի մոտոմունքներն ու զգացմունքները. Ընարազիտութիւնն ու խորամանկութիւնները, մինենյն ժամանակ բաւականութիւն չգտած զգայական կրքի չարութիւնը: Հազիւ ազատուած օրհասի բերած այս վտանգից, աւելի ծանր փորձութիւն է զալիս նորա զլիքին. Նա ստիպուած է թողնել փառք, հայրենիք, ծնող, և ընտակուիլ Թուրանում, Աֆրասիարի հետ կապած ուխտին հաւատարիմ մնալով: Առ ժամանակ կարծես բազգը ժողուում է հերոսին. Նա երջանիկ է իւր ամուսնութեամբ, կեանքի վայեցները շրջապատում են նորան, բայց օրհասի ամպերը աւելի և աւելի կուտակուում են հերոսի զլիքին և վտանգաւոր դաշնութեամբ: Աֆրասիարի

հզրայրը՝ Դեբսիվէս, որ չարութեան մի տիպ է, կարողանում է վերջի վերջոյ համագել թագաւորին, որ Սիավուշ սպանուի: Այս բոլոր դէօքերը նկարագրուած են վերին աստիճանի կենդանի և զրաւիչ կերպով. ընթեցողը իւր հոգու բոլոր զօրութեամբ հակուած է բարի, աղնիւ և առաքինի Սիավուշի կողմը և թախտութեան զգացումը սրաբն հետևում է հերոսի կեանքի ընթացքին, ափսոսալով, որ օրհասն այնպէս անողաք կերպով հալածում է նորան:

Առաստամ-Զալի մէջ այս կաշկանգոզ զօրութիւնը չնեք աեսնում, և սիալ կ'լինէր սպասել, որ ժողովուրզը հոգերանական այնպիսի մանրամասութիւններ և զգացմունքների վերլուծութիւններ անէր, ինչպէս միրդուսին իւր վէպի մէջ: Ոչ Սիավուշի, ոչ Սուզարէի, ոչ Դեբսիվէսի և ոչ միւս անձանց դէմքերը ժողովրդականի մէջ չեն նկարուած այնպիսի նորութիւններով, ինչպէս արել է այդ բանաստեղծը: Ժողովրդական վէպին յատուկ չէ մանրազնին կերպով զրագուել հերոսների հոգեկան աշխարհով, թէն հոգերանական նշգութիւնը միշտ պահպանուած ենք տեսնում նուր մէջ: Այնտեղ հերոսների ընայթը որոշում է միայն ընդհանուր գծերով, զուտ առարկայական կերպով, այսինքն նոցա զործողութիւններով: Բնականաբար ժողովրդը շեղուել է աղքիւրից և հետեւով իւր բանաստեղծական—միթական ընապդին՝ իւր հայեացքների համեմատ ձևակերպութիւն է տուել պատմութեան: Ամրող գլխի մէջ միայն առաջին և վերջին երկու հատուածներն են, որ յիշեցնում են փոքր ի շատէ ընապիրը, Յացած մասը՝ այն է Սիավուշի մանկութեան նկարագրութիւնը, որի գնալու ահեսարանը, Սիավուշի և անհաւատարիմ մօր մէջ պատահած արկածը, վերջինիս խորամաննկ դիմակաւորութիւնն ու ամուսնուն գրգռելը որդու գէմ, թագաւորի պատուէրը որդուն սպանելու, Սիավուշի հագուստը շատ արեան մէջ թաթախելը, միանգամայն անկախ պատմութիւններ են ժողովրդական հայեացքներով և վէպին յատուկ գծերով: Այս մասի մէջ փոխենք անունները, այլ ես ոչ մի հետք չենք ունենայ, թէ որ և է առնչութիւն կայ Շահնամէի հետ: Ընդհակառակ կամ տեսարաններ, որոնք կարծես փոխ են առնուած մեր աղգային վէպից<sup>1)</sup> և յատուկ են ոչ միայն մեր վէպին: Հոգերանօրէն և անհաւատարիմ Սուզարէի (անունը չէ յիշուած) խորամանկութիւնն ու դիմակաւորութիւնը նախ առումնուն խարելու և ապա որդու գէմ գրգռելու մէջ, Սիավուշի անմնջութիւնն ու մաքուր ընաւորութիւնը արտայայտուած է

1) Առաջ Եսէր. էք. 84.

միանգամայն ճիշդ: Սուզարէի գերը կատարող կնոջ բնոյթը օտար ազգերի վէպէրի կամ աւանդութիւնների մէջ ևս նկարագրուած ենք տեսնուած մօտաւոր նմանութեամբ:

9.

Հինգերորդ և վեցերորդ գլուխների տեսչութիւնը Շահ-Նամէի հետ այնպէս որոշ չէ, ինչպէս նախընթաց գլուխներինը տեսանք: Նմանութիւնը հեռաւոր է, այն էլ որոշ գէպէրի վերաբերութեամբ միայն, ինչպէս օրինակ Մոստամի Թուրքն նուաճելը ու այնուղ թագուորելը Սակայն հաւանական է, որ այս գլուխների բովանդակութիւնը Շահ-Նամէի ազգեցութեամբ յառաջ չի եկել: Հինգերորդ գլուխը բացառութեամբ վերջարակնի, նման է պ. Բագրատ Խալաթեանի հրատարակած «Ծոստամ»<sup>2)</sup> վերնագրով հաստատեին, որ գրի է առել Վանայ նահանգի Զիրուխը գիւղի ընակիչ Վարդան Գալուստեանից: Այս երեսյթը մի առացոյց է, որ մեր հատուածը ծանօթ է ժողովրդին նաև Մոկաց շրջանից դուրս: բարբառն նայելով՝ Զիրուխը առ Մոկաց երկրուած չափար է զանուիր: Եթէ Շահ-Նամէն չէ այս գլուխների աղբեւը, յամենայն գէպս ծագուածով պարսկական են նորա, որովհետև գործող հերոսները Շահ-Նամէի յայտնի հերոսներն են և պայքարը զարձեալ իրանի և Թուրքանի շուրջն է պատւում: Բ. գլուխի վերլուծութեան ժամանակ արդէն տեսանք, թէ ինչպէս Ֆիրզուսու հետեղութեամբ Պարսից մէջ մի ամբողջ գիւցազններգուկան գրականութիւն է ծաղկել և նոցանից մէկից՝ Բուրզոյ-Նամէից փոխ էր առնուած Ծոստամ-Զալի մի մեծ հաստամ (եր. 12—19): Անհաւանական չէ, որ Ե. և Զ. զլուխները, ինչպէս և պ. Խալաթեանի հրատարակած հաստածներից մի քանիսը, փոխառութիւն լինին վերոյիշեալ դիւցազններգութիւններից, տարարագարար հնարաւորութիւն չ'ունինք որոշելու, թէ մը որտեղից:

10.

Ծոստամ-Զալի և Շահ-Նամէի բովանդակութեան համեմատութիւնը պարզում է մի երեսյթ, որ շատ խրատական է ժողովը բանահիւսութեան ուսումնասիրութեան նկատմամբ: Ծոստամ-Զալի ծագման հիմքն է կազմում այն վէպը, որի սկզբնաւորութիւնը կապուած է արիական ազգերի ընդհանուր հայրենիքի հետ, հերոսներից մի քանիսը յիշուած են նաև հնգկաց Միդ-Վե-

2) Եքանէ հերօսները ա. եր. 45.

գայի մէջ, և որ գոյութիւն ունէր Պարսկաստանում 660—583 թ.  
Թ. ա. ծագուծ Զենդ-Աւետառայից էլ առաջ, Պարսից զիւցազներգութիւնը ամենասերտ կերպով կապուած է եղել զրադաշտական կրոնի հետ և բազգակից նորու պատմութեան. Աքեմենեան հարատութեան աշխարհակայութեան հետ տարածուել է Առաջաւոր Ասրայում, կանգ տուել Ազերանդով մեծի որշաւոնքներով և մասմբ Պարթևաց ամբագիտութեամբ, վերափենդանացել Սասանան պետական գրադաշտական կրօնի վերածնութեան հետ: Ազա գրի է տոնուել Ե. Զ. և Է. զարերում պահաւիկ լեզուով, արարերին թարգմանելուց յետոյ, որից քաղուածներ են մասցել արար պատմիչների մէջ, բանաստեղծական մշակութեան է ենթարկուել Ժ. զարում՝ մասմբ Խազրիցի և ապա ամբողջութեամբ Ֆիրազուի բանաստեղծների ձեռքով և ընդհանուր աշխարհին յայտնի զարձել Շահ-Նամի անունով<sup>1)</sup>: Ահա այս հազարաւոր տարիների պատմութիւն ունեցող վեպը այսօր հայ ժողովրդի անդիր բանահիւառ-Զալը բազմազան վարիանաներով և բարբաներով տարծուած է մեր ժողովրդի մէջ, որնց գրի առնելին ու բանասէր հասարակութեան մատչելի զարձնելը կարևոր ծառայութիւն կրթիւնը է մեր բանահիւառութեան ուսումնասիրութեան համար և զուցէ կ'լուսաւորէր նորու պատմութեան շատ մութ էջեր: Ահա փոխառութեան մի գէպը, որի պատմութեան մննք հետեւել կարող ենք, բայց ճըքան հերքամիներ, երգիր, առակներ և բանահիւառութեան միւս տեսակներին պատկանող երևոյթներ ունինք, որոնք փոխառութիւն են կամ փոխազարդ ազգեցութեամբ յառաջ եկած, բայց դեռ բացատրուած կամ համեմատութեան հնթարկուած չեն:

## II.

Խոստամ-Զալի, Շահ-Նամի և նման զիւցազներգութիւնների առնյալութիւնը պարզեցւոց յետոյ, մեզ կ'մնայ չորրորդ պղակում՝ արած տեսութիւնը փոքր ինչ աւելի մանրամասնել և ցոյց տալ այս վէպի արժէքը մեր բանահիւառութեան պատմութեան համար, ակնարկելով նաև համեմատութեան ժամանակ արած նկատողութիւնները:

<sup>1)</sup> Nöldecke. Das Iranische Nationalepos, Strassb. 1896

Chack. Helden sagen von Firdusi, Berlin. Einleitung.

A. V. Williams Jackson. Die Iranische Religion. Grundriss der iranischen Philologie, herausg. v. Wilh. Geiger u. Ernst Kuhn, 1901 Strassb. Борис. Всесоюзная История Литературы I. часть I.

Ժողովրդական վէպն ընդհանրապէս սկսում է կազմուել ժողովրդի գիտակցութեան ծագման հետ. նորա հիմքն են դառնում կրօնական գիցարանական ընաւորութիւն կրող աւանդութիւնները, ընութեան ուժերի աստուածացումը, որ վէպի մէջ հանդէս է գտլիս անմասաւորեալ պատկերներով. Սակայն գիցարանական տարրերն աղօտանում են ժամանակի ընթացքում և տեղի տալիս պատմականին. գիցարանական պատկերները մարդկային կերպարանք և ընաւորութիւն են ստանում Վէպի ծագման պատմութեան մէջ այսպիսի փոփոխութեան հիմք և կեղուն են կազմում պատմական այնպիսի ժամանակշիռ գէպքեր, որոնք յեղափոխական նշանակութիւն են ունեցել ազգերի կեանքի համար և անջնջելի դրոշմ թողել նոցա յիշողութեան մէջ. Վէպն ի հարկէ պատմութիւն չէ, բայց նա պատմական է այն տեսակէտով, որ նրա մէջ արտացըլուած ենք տեսնում ժողովրի պատմական և առօրեայ կեանքը, նիստ ու կացը, հայեացքները. Դիցարանական և պատմական այս երկու տարրերի հետ միանալով բանաստեղծական գաղափարը, կազմում է վէպը. Խընին հասկանալի է, որ սոցա վերայ պէտք է տեղացնել և լեզուն, որ ոչ միայն անհրաժեշտ միջոցն է այս բոլորը արտայայտելու և թանձրացեալ ձեւ տարու, այլև վէպի ծագման և զարգացման հետ ինը էլ ստեղծում, զարգանում և ենթարկում է ժամանակի փոփոխութեան:

Այս համառօտ տեսութիւնից յետոյ հասկանալի է, որ իւրաքանչիւր վէպ պիտի զնանատոփի գիցարանական, պատմական, գեղասիրական և լեզուարանական տեսակէտներով. Ոչ առաջին և ոչ երկրորդ տեսակէտներով այս վէպը առանձին նշանակութիւն չունի մեր ժողովրդական բանահիւսութեան պատմութեան համար. այսակ չեն արտայայտուած ոչ հայ ժողովրդի կրօնական-գիցարանական զաղափարները և ոչ սորա հիմք են կազմել նորա անցեալ կեանքը յեղաշրջող պատմական գէպքեր: Նոյն իսկ հերոսները գետ չեն հայցած, ինչպէս պ. Խալաթեանի հրատարակած շրուրգէ վերնագրով հատուածի մէջ տեսանք. ժողովրդը գիտակցում է, որ այս վէպը ծագումով հայրենի չէ, այլ իրանցիք և թուրանցիք են, որ մրցում են իրար հետ, և այս բոլորը լաւազայն ապացոյց է, որ փիտառութիւնը համեմատաբար նոր պէտք է լինի կատարուած: Նա պատմական նշանակութիւն ունի մեզ համար միայն այն շափով, որ շափով ժողովրդական հաւատալիքները եւ հայեացքներ է ըսվանդակում՝ իւր մէջ: Այս վէպը իւր ծագմամբ կապուած է Պարսից հետ, ուրեմն և նոյն ազգի գիցարանական պատկերներ և պատմական իրողութիւններ պիտի որոնենք նորա մէջ: Եւ յիրաւի գիտնականներն արդէն պարզել

են, որ Շահ-Նամեկի անուններից շատերը դիցարանական են, Իրավեհպայի և Զենդ-Աւեստայի մէջ յիշուած, իսկ ոմանք պատմական անցքերի կամ անձնաւորութիւնների յիշոզութիւններ։ Մի կողմը թագներով մանրամամութիւնները, որ մեզ զբաղեցնել չեն կարող, յիշենք միայն Ռուսամ-Զալի մէջ կրկնուած Կաւ-Ղաւուս, Կաւ-Խոսրով, Սիստուշ անունները, որոնք դիցարանական են, և արգէն յայտնի Զենդ-Աւեստայի մէջ. Զալ և Ռուսամ անունները թէն զարձեալ զիցարանական, բայց Զենդ-Աւեստայի մէջ չեն յիշուած։ Այս հիման վերայ Ներզըկէ կարծում է, որ Ռուսամ-Զալի զիցարանութիւնը ժագել է Աւեստայի հայրենիքից<sup>1)</sup> գուրու Սիստուն և Զարուէ երկրներում, եթէ Սակերն իրենց հետ չեն բերել հւեսիւային հայրենիքից<sup>2)</sup>. Պատմական անուններից պէտք է յիշել Դե, Գոզարզ, Միլադ, Բէժման, Բահրամ, որոնք Արշակունիաց տիրապետութեան ազդեցութեան հետքեր են։

## 12.

Վերոյիշեալ զիտողութիւններից ինքնըստինքեան հետևում է, որ այս վէպի նշանակութիւնը սահմանափակւում է մեր բանահրատութեան համար ևթէ ըստ ամենայնի ազգային ստեղծագործութիւնը լինէր կամ շատ հինաւուրց ժառանգութիւն, որով փոխառութան հնարքերը շատ մեզացած և ազգային բնաւորութիւն ստացած լինէին, ի հարկէ ուրիշ արժէք և նշանակութիւն կ'ունենար, քան այժմ Բայց հենց այս վիճակի մէջ էլ աննշան արժէք չ'ունի մեր աշքում։ Համեմատութիւնից տեսանք, որ բարեկազգաբար ստրկական վերաբազրութիւն է Շահ-Նամեկից, այլ մասամբ տարբեր արտայայտութիւն է նոյն նիւթի և մասամբ բոլորսին անկատ ստեղծագործութիւն։ Մեր քաղաքակրթութեան մի բեկորն է Ռուսամ-Զալի իւրացման պատմութիւնը. ինչպէս բիւզանդական կամ արաբական քաղաքակրթութիւնը իւրացրել, բայց ազգային կերպարանք և հոգի ենք տուել, նոյն ենք տեսնում և այստեղ փարք չափուի։ Ռուսամ-Զալի նիւթն ըստ էութեան փռառութիւն է, բայց նիւթի արտայայտութեան և գէպքերի կա-

<sup>1)</sup> Աւեստոյի և նորա հետ ուրած կազմած Պարսիկ զիցազներդաթեան ժաղժամ անք մոտի զիտականների մէջ առանձյաւելին կոյ. Տոկ, Ներդրէ. Հիւսիս արենցն և համարու Աւեստոյի ժաղժամ նոյնէնիքը, իսկ Williams Jackson իւր զերոյիշեալ երկի մէջ, ինչպէս և որինիքը՝ Սորզաստական կամ Բարմի յէի, Կուզ և Երասի գնանը և ուզ հիւսիսուին Պորտաստի և Ֆերմանի ու Արցուր առքերի մէջ շնկած երիբը. Ծն առ Գeldner. Avestali tieratur էր. 38. Grundriss der iranischen Philologie.

<sup>2)</sup> Das Iranische Nationalepos էր. 9—10.

պակցութեան մէջ ժողովուրդը շեղուելով աղբիւրից, որոշ չափով ինքնուրոյնութիւնն է պահպանել և իւր հոգու գրոշմը դրել նորա վերայ Այս տեսակէտով էլ նա նշանակութիւն ունի մեր բանահիւռութեան պատմութեան համար:

Հերունների, դէպքերի և պատերազմների նկարագրութիւնները ազգային են և ժաղավրդական, որովհետեւ մեր վէպքերի, երգերի և հէքիւթների մէջ էլ մօտաւորապէս նոյնն ենք տեսնում կամ նոյն հոգով նկարագրուած: Չհաշուելով Ռուսուամ-Զալի մէջ ինքնուրոյն, փոխ առած նիւթի հետ հիւսուած և ամբողջութիւն կազմած մասերը, կան հատուածներ են, որ եթէ հերունների անունները փոխենք, դժուար կ'ընէք որոշել, թէ մի օտար վէպից առնուած փոխառութիւն է այն: Այստեղ զանում ենք ժողովրդական վէպին յատուէ բոլոր գծերը. հերունների, դէպքերի, պատերազմների միապական և պատկերաւոր նկարագրութիւններ, չափազանցութիւններ, կրկնութիւններ ամբողջ հատուածներով կամ բառերով պատմութեան աւելի կենզանութիւն տալու համար. այստեղ գտնուում ենք գործողութեան խաղաղ, պատմովական ընթացք, ուր ամեննեին չի նկատում պատմովի անձնաւորութիւնը և այն էլ բանաստեղծական այնպիսի աւելնով և ճշգրիթեաւմբ, որ գեղասիրական ճշմարիտ հանոյք է ստանում ընթերցազը, և վերջապէս վիրական, կենզանի ինդու, որ ժողովրդական ստեղծագործութիւնների մէջ կատարելագոյնն է: Այս բոլորի հիման վերայ կարող ենք տաել, թէ հայ ժողովրդի երեսակայութիւնն ու ստեղծագործով ոգին անմասն չէ մնացել վէպիս ներկայ կազմութեան մէջ և այդ կողմից որոշ չափով գեղարուեստական արժէք ունի այն մեր աշխաւմ, ինչպէս իւրաքանչիւր ժողովրդական վէպ:

## 13.

Ժողովրդական բանաստեղծութեան էտեկան յատկութիւնը պարզութիւնն ու բնականութիւնն է: Ժողովուրդը ոչ մատենացրութեան և արուեստի տեսութիւններ ուսումնասիրելու և ոչ մեծ բանաստեղծների երկեր կարգալու կարիք և հնարաւորութիւնն ունի նրանց հետեւելու համար և իւր երկերն ստեղծում է անզիտակցարար, ինչպէս անզիտակցարար է ստեղծուում աննայն մի հիացմունքի արժանի ստեղծագործութիւնն: Այս խօսքը ճշմարտում է յատկապէս վէպի վերաբերութեամբ, որ ժողովրդական բանաստեղծութեան ծաղիկն է: Ո՞գ է ստեղծել վէպը, թրբ, թնչ պայմանների մէջ, ժողովուրդը ոչ մի գիտակցութիւն չ'ունի այդ մասին, այդ նորա հոգու անմիջական, պարզ արտադրութիւնն է, անարուեստ, բնական, ուստի և գեղեցիկ:

Ժողովրդական վէպի այս յատկութիւններն ունի և մեր ժուռամ-Զալը, թէն Շահ-Նամէի ազգեցութեամբ ծագած, Ժողովուրդը մեզ հաշիւ տալ չի կարող, թէ թնջուկն է կատարուել այդ փախառութիւնը, թնջուկն հատզնաւէ ներկայ կազմութիւնն ստացել, մէկ է ստեղծել այն վիճակոն նկարագրութիւններն ու պատկերաւոր արտայայտութիւնները, գեղեցիկ նմանութիւնները, թէն չէ կորցրել այն գիտակցութիւնը, որ այս վէպը հայրենի չէ, Այս աեղ չ'կան ոնհատական արուեստի հետքեր, հնթակայական զգացմունքների, ներքին աշխարհի շարժումների, ներուների զործուութեան հոգերանական վերլուծութիւններ, այլ առարկայական, պարզ, հակիրճ նկարագրութիւններով մեր առաջ պարզւում է այն պայքարը, որ ծագել է լուսոյ և խուռարի ներկայացուցիչ երկրների մէջ, Անշաւշը վէպի բոլոր մասերն իրար հետ կապող բանաստեղծական այս ընդհանուր զաղափարի, մասամբ ևս ներսուների նկարագրի նմանութեան մէջ նկառում է Շահ-Նամէի ազգեցութեան հետքեր, սակայն այդ հանգամանքը շատ ծանրակշիռ նշանակութիւն չունի, կարծում ենք, մեր վէպի գեղարուեստական արժէքը որոշելու համար Այդ զաղափարը յատուկ չէ միայն Պարսից գիւցաներգութեան, այլ ընդհանրապէս ժողովրդական վէպին: Մեր խօսքն ի հարկէ զրադաշտական կրօնի երկուութեան վարդապետութեան մասին չէ, այլ բարւոյ և չարի, լուսոյ և խուռարի ընդհանուր զաղափարի մասին: Իսկ այդ չափով հակազդութիւն արտայայտուած ենք անսում, ինչպէս ամենը վէպի, այնպէս եւ մեր ազգային վէպի մէջ, Դաւիթ քարութեան ներկայացուցիչն է, Մորամելիք և իւրայինները շարութեան, Դաւիթ հայրենիքի պաշտպանն է, Մորամելիք թշնամին: Նոյնը պիտի առենք և հերոսների նկարագրի վերաբերութեամբ: Նորա էական գծերով նման են ազգային վէպի կամ հերիաթների հերոսներին և նման համակրութեամբ կամ հակակրութեամբ ընդունուած, որովհետեւ մարմացումն են այնպիսի բարոյական զաղափարների, որոնք հայրենի են ժողովրդի հոգու, ներքին աշխարհի համար:

Եւ յիրաւի համեմատութեան ժամանակ տեսանք, թէ Ռուտամ-Զալի և Շահ-Նամէի գեղարուեստական կազմութիւններն ինչպէս տարրեր էին միմնանցից: բաւական է յիշենք Զոհքարի և Սիավուշի անուան հետ կապուած վէպերի մասին մեր արած նկատողութիւնները: Ժողովրդականը պարզ էր, անարուեստ, իւրատեսակ գեղեցկութիւններով: Այնտեղ արծարծուած զաղափարները լուծուած էին ժողովրդական հայեացքների համեմատ և ժողովրդական վէպին յատուկ ձևերով: Հերոսների ներքին աշխարհի շարժումները մարմատան վերլուծութեան չէին ենթարկուած, թէն

հոգերամնօրէն միանգաւամայն ճիշդ, որովհետև ժողովրդական բանաստեղծութեան յառուկ չէ կեղծիքը: Մի օրինակ յիշենք մեր տուածը աւելի թանձրացեալ կերպով ընթերցողի տուաջ պարզելու համար. Ռոստամի ցաւն ու կոլիծիծը Զօհրաբի մահուան պատճառով չի նկարագրուած այսպիսի մանրամասնութիւններով, ողբերով, ինչպէս Շահ-Նամեկի մէջ. Ռոստամը մինչեւ իսկ խօսքով ոչինչ չի արտայայտում. բայց մի քանի տող պատճութիւն (եր. 12) պարզում է մեր տուաջ այն խորին վիշտը, որ կուռմ է նա իւր սրտի խորքում: Երեք տարի անբազզ հայրը որդու զիակը զբան զլիովն պատըում է աշխարհը և ոչ չի համարձակւում առաջարկել նորան թաղելու: Անարուեատ բանաստեղծութեան յառկութիւններից մէկն է այս, որ զործագրուած ննջ տեսնում Ռոստամ-Զալի մէջ: Նոյն ձևով են արծարծուած և լուծուած յաւերժ կենդանի և մարդկային հոգու ամենանուրը թեւերը շարժող ուրիշ շատ բարոյական գաղափարներ և ինդիբներ հայրենասիրութիւն, մնողասիրութիւն, որդենիրութիւն, ամուսնական հաւատարմութիւն և անհաւատարմութիւն, քաջութիւն, ուխտապահութիւն և ազնութեան, եագոյական շարութիւն և այն: Այս բոլոր գաղափարները կապուած են նիւթի հնա, այսուեզ անցել են Շահ-Նամեկից, բայց նոքա ձև և կերպարանք են ստացել ժողովրդական հայեացքների համեմատ, ուստի արգելք չ'պիտի լինին այս վէպի գեղարուեստական արժէքը բարձր կշռելու և զնանատելու: Եթէ մոռանանք մի բոսէ, որ Ռոստամ-Զալը ծագել է Շահ-Նամեկի ազգեցութեամբ, կարծում ենք որ նորա տպաւորութիւնը ոչ միայն պական չէր լինի մեր ազգային վէպից, այլ գուցէ և գերազանց լինէր: Վեպական արտաքին յատկութիւններով, բանստեղծական և վիպական գեղեցիկ հատուածներով, լեզուի կենդանի և պատկերաւոր արտայայտութիւններով ազգային է այս վէպը նոյնչափ, որչափ և Ասմայ ծուերը իւր վարիանաներով:

## 14.

Յոյց տալ մի առ մի Ռոստամ-Զալի բանաստեղծական և վիպական գեղեցիկութիւնները, վերլուծութեան ենթարկել հերոսների նկարագիրը, արտայայտուած գաղափարները, շատ հեռու կ'տանէր մեզ: Նորա գեղարուեստական կազմութեան մասին նաշակ տալու համար՝ բաւականանք միայն մի հատուածի վերլուծութեամբ, մանաւանդ որ առանձին պրակով տոիթ կ'ունենանք մի քանի խօսք ևս վիպական գեղեցիկութիւնների մտախն ասել, որով

և մասամբ կ'ըրացնենք մեր տեսութիւնը: Վերլուծութեան նիւթ ընտրում ենք Գ. դլուխը<sup>1)</sup>:

Ամբողջ կարելի է երեք մասի բաժանել, առաջին՝ Ծոսաամ իւրայինների հետ անցնում է Թուրանի սահմանը և ոչնչացնում թշնամու կանաչազարդ գաշտերը, նրկորդ՝ Թուրանի Աֆրասիար թագաւորը լուս է այդ մասին և նոցա գէմ արշաւում. երրորդ՝ հերոսների մնամարտութիւններն ու բան պատերազմը:

Ա. Հենց սկզբնաւորութիւնը հրաշարի է գեկերիւնի, տան որ նիստն կինացիր ի, քանի մացիրք: Դորանով լարւում է մեր ուշադրութիւնը, սպասում ենք շարունակութեան: Հատուածի բովանդակութիւնն ի նկատի ունենալով գուցէ սովորական կլինէր, եթէ նոյն նկարագրուէին զարդան գեղեցկութիւնները և առա նորա հետ կապուէր Ծոսաամի ցանկութիւնը, զինակիցների հետ որորդպական արշաւանք սկսել թշնամու կանաչազարդ գաշտերում: Դորա փոխարէն լուս ենք Ծոսաամի հրամանը գեուրուզնան, որ պէտք է զնար և անզեկութիւն բերէր, գարունը բացումը է բւր հրաշալիքներով, թէ ոչ, Բայց առանց նորա պատասխանին սպասելու, հաւաքում է զինակիցներին և արշաւում: Ծոսաամի շնուրուզնան ուղղած հրամանի մէջ անուղղակի կերպով, կարծես վրձինով, նկարում է զարունը իւր կանաչազարդ մարզագետաններով, ժագիկներով, աղբիւրներով և որսի երէններով: Մեր երեւակայութեան առաջ պատակնեանում է զարնանային մի պայծառ օր վերոյիշեալ հրաշալիքներով, որ աւելի կինդանանում է նոյն իմաստն ունեղող հնտեհալ կրկնութիւններով: Ժողովրդական անառակես բանաստեղծութեան առ հասարակ յատուկ շէ բնութեան տեսարանների ընդարձակ նկարագրութիւններ տալ և ոչ էլ բնութիւնը նկարագրել ինքնըստինքեան որպէս գեղեցկութիւն, բայց եթէ պատասխում են այդպիսի հակիրճ նկարագրութիւններ, միմիայն հերոսների գործողութիւնը լուսարանելու համար: Վէպի խսկական նիւթը մարզն է<sup>2)</sup>: Նոյն ենք տեսնում և այսանց: Պէտք է նկարագրուէր երկրի գեղեցկութիւնը, որպէս զի նորա աւերումը իրանի հերոսների ձեռքով և ըթող ու մասահունց դարձնելը, աւելի կինդանի և տպաւորիչ լինէր: Ծոսաամի հրամանի պատասխանի մասին, ինչպէս յիշեցինք, ոչինչ չենք լսում վէպի մէջ: այդ պական ինքնարերաբար լրացնում է մեր երեսկայութիւնը, այսինքն թէ՝ շնուրուզնան զնում է և զիստում թշնամու սահմանները, տեսնում է, ինչպէս մարգագետինները կանաչել են, ժաղիկ-

<sup>1)</sup> Ծիբերցողին ինքրում ենք նոյն ընազըի հետ ժանօթանալ:

<sup>2)</sup> Եցաւանք. Շն. եք. 66.

ներով գարդաբուել, կարկաչանոս աղքիւրները հոռում են, զայտերը լցուած են երէներով: Նա վերադաշում և տեղեկութիւն է տալիս այս մասին իւր տիրոջը: Այս բոլորից յետոյ միայն պէտք է Ռոստամ թղթէր գրէր և զինակիցներին զօրքով իւր մօտ հաւաքի:

Զօրքը չուում է և վրանները գարկում թշնամու սահմաններին կից մարգագետնների մէջ. Տէրան զկանաչ կարմիր (զրոշակ) թալիցին չազրի վերայ, քեամին կ'զեարկի, կ'վիրուցի: Խնչան զեղցկութիւն է տալիս այս փոքրիկ պատկերն ընդհանուր նկարագրութեան Սորոն հատում է Ռոստամի կերութումը և ապա հրամանը՝ անցնել սահմանը, վշացնել թշնամու մարգագետնները և որորդութիւն անել այսուեղ: Այս հրամանի իրագործումն և Գիր ու Ֆէրամազի պահապան նշանակելլ թշնամու երկիրը մտնելուց առաջ, շփոթութիւն է պատմողի կողմից, որ խօփոյն նկատելի է պատմութեան ընթացքից: Կեր ու խումբ հետմեալ օրը միայն զօրքը շարժում է, անցնում սահմանը և բանակ դուռմ նորա մարգագետնների մէջ, Վրանները նսփում են Թուրանի հերունների վրանների սեղ դիրքի և աստիճանի համեմատա: Ռոստամ իրաւունք է տալիս գաղտներն արածացնել, ծաղիկները կոխուտել, աղրիւրները աւերել, երէներն սպանելու Քջայիրքիր բիրազի արձացցին, զժաղկունիր պիկչիւր կոխցին, զյազպրքիր բիրազի աւրիցին: Թող մառախուն էտու վեար սեահրանգին: Սորանով վերջանում է առաջին մասը:

Շահնշամէի մէջ այս հասոււանն այսպէս է. Ռոստամ իւրայիններով որորդութիւն է անում, զուարճանում այլ և այլ խաղերով, կեր ու խումզի, մնջոյքի ժամանակ Գին տուշարկում է գնալ Թուրան և Աֆրասիարի գաղտներում որսալ: Ռոստամ հաւանութիւն է տալիս նորա առաջարկութեան և միւս օրն ամենայն պատրաստութեամբ չուում են այսուեղ, վրանները խփում և անձնատուը լինում: Կեր ու խումբ, Ընթերցողն ինքնին նկատել կարող է, որ ժողովրդականը ոչ միայն տարրեր կազմութիւն ունի, այլ և աւելի բանաստեղծական և գեղեցիկ է, քան աղքիւրը:

Բ. Պատմութեան ընթացքն ապա մեղ փոխադրում է Թուրան: Թագաւորը նստած է իւր թախտին, վազիրներն ու փալաւանները շուրջը կանգնած, իսկ էկուրուղչինքն հրաման է սահմանում. Եկինա, իրիշի մի սահրէնգին բացութիր ի, ձիւն վերէն կինացիր ի, մի շայիրքիր եղիր ի, վէրու օչխար կմյ ինի, թի չի, մնաք ա'երթանց սէհրանգին ուրախութին էնինք մե խամաց, ձիշտ նոյն հրամանն է կրինուած, ինչ որ Ռոստամ տուել էր իւր էկուրուղ-

չունա: Պահապանը կատարում է հրամանը, դիտում է սահմանը, վերապահում և այլայլում՝ զիտակը ձգում թափառքի տուջ: Այդ տարօրինակ և համարձակ գործողութիւնն ինքնուստինքեան յուղամ ու հետաքրքրութիւն պիտի զարթեցնէր բազմականների մէջ, այդ նշան էր, որ դոյց ունէր հաղորդելու: Թագաւորի հարցին պահապանը նկարագրում է տիսուր հզելութիւնը: Թուրտնի հերոսների վրանի տեղ՝ թագաւորից սկսած՝ խփուած են թշնամու վրանները, ողջայիբըիր էրըծացածի, զծազկափիր կոխած ի, զմէրու օշխար սպանած ի, զյազպբիր բիբազի տըրած ի, սէհրանցին ըսկուն էրած, թող ու մասախուն, ալ տէր չճանշայց: Ազա նկարագրում է վրանների զոյները, որոնցով տէրերը պիտի ճանաշուէին և վերջացնում է մի բացականչութեամբ, որ ցոյց է տալիս թէ բնչ սարսափելի տպաւորութիւն էր արել նորա վերայ իրանցոց գօրքը: Ճէիմ էլ խէյզաթի տիւռ կապուկի: Ենու ականչքիր էրինուոց խիտ: մէկ փալաւան էնաեղ քնիր ի, ենման էնու զիւրզւ:

Ժողովրդական վէպին յատուկ մի երեսյթ է այս չափազանցութիւնը բայց որը ոչ միայն չի խանգարում բնական գեղեցկութիւնը, այլ և առանձին աշխայժ և կենդանութիւն է տալիս պատմութեան ընթացքին: Բնած փալաւանի ներկայութեան նոյն իսկ արտաքին նշանները՝ գուրզն ու ձին, պէտք է սարսափ տարածէին թշնամու վերայ: Այդ բնած փալաւանը ոչ այլ ոք է, բայց եթէ թուստամ, անունը չի յիշուած, ունկնդրի երեակայութիւնն ինքն է զանում, թէ մվ է բնած փալաւանը: Վէզզը գորանով խորհրդաւոր է զանում, սպասում ենց, թէ բնչ պէտք է անի այն ներուը, որի գուրզն այնչափ սարսափ է ազգել սահմանապահի վրայ: Բնդանբապէս տկուրուզուու զեկուցումը իւր թագաւորին անպանցի և անարուեստ, զեղեցիկ և բնական արտայայտութիւն է այն տպաւորութեան, որ պէտք է սահմանար հեռուից դիտելով: Ակամայ յիշում ենց Բուլայելի մի խօսքը: Ընկարագրել առարկան այն տպաւորութեամբ, որ նա անում է հոգու վերայ—ճշմարիտ արուեստագէտների մեծ արուեստն է: Բանաստեղծական բարձր արժանաւորութիւններից զուրկ չենք կարող համարել այն ժողովուրզը, որ այս և նախընթաց հատուածների նման նկարագրութիւններ կարող է տալ, մանաւանդ, որ այստեղ բոլորովին ինքնուրայն է ժողովրդականը: Մեր բանահիւսութեան լաւագոյն կառըները Մոկացոց ենք պարտական, ոչ միայն ազգային զիւցազներզութեան գեղեցիկ վարիանտներ, այլ և այնպիսի վիզական երգեր, ինչպէս

Ասլան Աղջին, Մուկաց Միրզէն, Նարեկացին, Կարռու Խոշը<sup>1)</sup>։ Դեռ  
մզ գիտէ ինչ թանգագին գոհարներ անյայտ են բանափրութեան։

Գ. Երրորդ մասով սկսում է թշնամիների ընդհարումը։  
Մի գեղեցիկ միջնագէպ է յառաջապահ Դեկտիմազրութիւնը։  
Թագաւորը փորձում է խոստութիւնը քաջին իւր կողմը զրաւել,  
բայց Դեկտիմաստեղծական պատկերաւորութեամբ և ծաղրով  
տուած պատասխանը՝ «Է՛», քիւ աշքիր յիտ պեաց, եթու իմ մէկ  
չիմ իսոյ մէկ պետ կուրիկէ, հիացում է յառաջ բերում թշնամի  
հակառակորդի մէջ։ Թագաւորի հիացմունք արտայայտող խօսքերը  
պատմողի շփոթութեամբ աւելի յետոյ են դրուած, որ գարձեալ  
իսկոյն նկատելի է դառնում պատմութեան ընթացքից։

Մինչ Դեկտիմաստեղծում է թշնամու դէմ, Ռոստոմ քնած  
է Զաւարէն զարթեցնում և նորան՝ Դեկին սպառութեան համակուու  
համար։ Բայց նա մատակարարին է դառնում, «Է՛, ըսաց, մէկ  
թաս գինի տուէք ձի, Գիւռ ձեն անիւշ կ'կեայ կուռու մէջ, քեանի  
Դիւ սազ ի, ախշար մազի փարէմ չ'ենի» Դարձեալ քնեց։

Այս երկու միջնագէպն էլ Շահ-Նամեկի մէջ տարրեր կերպով  
են պատմուած։ Երբ Աքբարիար զօրքով մօտենում է Իրանցից-  
ներին, Գուրագէն (ոչ Զաւարէն) լուր է հասցնում Ռոստոմին։  
Իւրայինների հնա այդ ժամանակ Ռոստոմ կեր ու խումբ էր  
նստած։ Նա ուրախուում է, մատակարարին հրամայում է գինի  
բաշխել, և իսմում է Կաւ-Կաւում և հերուներից ոմանց կենացը։  
Ռորանից յետոյ միայն Դեկտիմաստ է ինդորում կամուրջը պաշտ-  
պանելու նորան հետակա է Ռոստոմի կամուրջը պաշտպանելու։

Համեմատութիւնից տեսնում ենք, որ ժողովուրդն ինքնու-  
րոյն կերպով ստեղծել է թագաւորի և Դեկի խօսակցութիւնը, որ  
այնքան կենդանութիւն և գեղեցկութիւն է տալիս վէպին և աւելի  
է զօրացրել հերոսի բնաւորութեան ինքնավստանութեան զիճը։  
Ժողովրդական վէպերին և հէքիաթիներին յատուկ մի գիտ է այս,  
որ նկատում ենք և այստեղ։ Հերոսը վստահ իւր զօրութեան վե-  
րայ, արհամարհում է թշնամուն։ Մինչ երկու կողմից փալաւան-  
ները տաք կռուի են բռնուած, Ռոստոմ երկու անզամ անուշադիր  
է թողնում Զաւարէի կոչը, խմում է և քնում։ Երրորդ անզամ  
միայն, երբ Զաւարէն զարձեալ զոռում է մահուան վատանգի մէջ,  
վեր է կենում և զանգազարար պատերազմի պատրաստում։

Ռոստոմի սպառագինութեան և ձիու պատրաստութեան նը-

<sup>1)</sup> Փշտկեներ ժող. բանհիստութիւնից, եր. 3. 12. 16-19. Կառու Խոշի  
արիշ վարիանեներ «Վանա սազ», մերից 1865 թ. Քիֆիխ, եր. 73. «Թիոք  
Մշեցաց և Պանցաց», Սեղբակեան, Պալաշապատ, 1874 թ. եր. 9.

կորուպութիւնը այնքան գեղեցիկ է և զիադական, որ բառ առ բառ  
պէտք է մէջ բերենք ընթերցողին ճաշակ տալու համար Շնոսաւած  
կանգնաւ, լահ ուր թուր կապից, նէրից խանչար էզար մէջը, Եռու  
պիւս զթիւ ընցաւ, զափրկեաւան կախից, զքեամար կազից, զզբի-  
խէ շապիկ խագեաւ, զքիւրք էթըլ վըր թիւին, աչքիր շուռ առից,  
հըմէն մէ քեան մինու կթիւէ. Ըսու բեզիր ոլիրից, զականջ ընցաւ,  
հուռ մազիր կանգնան, զքիւէ շապիկ տիւս չտուս կանչից սայիս-  
քիրում, զձին թիմրիցին, զատամաֆէ զին խոի քեամակ ալտուղ-  
լամայ որքիր կախից, ձեռ էթըլ զգեսորդ վիրուց, իրիք խարիր քաթ-  
ման. աիրըմ կանչից վիրան, էրկու առին յիրուր, Ծցկուն զեորդ  
կ'զեարկին յիրարու, անցկուն ինչ կարգուա կեայց Աւելորդ հեք  
համարում մեր կողմից որ և է բացարութիւն աւելացնել, հա-  
սուածի զեղեցկութիւնն ու բանաստեղծական արժէքը պարզեցւ  
համար, միայն յիշենք, որ ամբողջութեամբ ինքնուրոյն է և ժո-  
ղովրդական, որովհետեւ Շահ-Նամէում չկայ. Ռոստամ սպանում է  
Ֆիրասըմին (Արդումին ըստ Շահ-Նամէի), էրկու կողմի զօրքիրը  
խառնում են իրար. Հնգան իրար ջնարտիցին, էրուն էզաւ զիս,  
զջամդաբարիր կըտանըց Թուրանցիք յաղթում են և փախչում.

## 15.

Այս փոքրիկ զիսի կամ ճիւզի մէջ, ինչպէս պատմողն էր ա-  
սում, աեսանք ժողովրդական վէպի այս բոլոր յատկութիւնները,  
որ արդէն թուեցինք ժմ. և ժդ. պրակում. Պատմութեան ընթացքը  
հանգիստ է, խազաղ և տպաւորիչ, ինչպէս յամրաքայլ խոր զետի  
հոսանքը: Գարնան սկզբնաւորութիւնն է նկարագրուած, թէ զօր-  
քերի բանակին ու զրօշակների ծածանումը կանաչ մարգագետին-  
ներում, Ռոստամի կեր ու խումն է, թէ զօրքերի որսորդութիւնը  
և թշնամու երկրի ըթող մասախումն դարձնելը, Աֆրասիարի դի-  
ւանն է նկարագրուած խորհրդակցութեան տեսարանով, թէ հե-  
րոսների մենամարտութիւնն ու ընդհանուր պատերազմը, այս  
բոլորը պատմուած է սրտի միակերպ հանգստութեամբ, տուր-  
կայական, ազատ անհատական զգացմունքների արտայայտութիւն-  
ներից: Սակայն վէպի այս խազաղ ընթացքը չնոք կարող առել, թէ  
պակաս տպաւորութիւն է զործում մեր հոգու վերայ, ինչպէս անհատական  
բանաստեղծութեան միւս տեսակները, քնարերգութիւնն ու ող-  
քերգութիւնը, Մեր երևակայութեան առաջ յաջորդաբար նկար-  
ում են այն աեսարանները, որ առջիս է մեզ վէպը, հոգւով զե-  
րանում ենք դէպի անցեալը, ազրում հերոսների հետ, զիսում

նոցա նիստ ու կացը, գործողութիւնները, մամնակից զառնում  
նոյն իսկ նոցա հայեացքներին և մտածողութեան եղանակին:

Ժողովրդական վէպի և առնասարակ գեղարուեստական երկի  
յատկութիւններից մէկն է հերոսների գործողութեան և խօսքերի  
հոգեբանօրէն ճիշդ և բնական նկարագրութիւնը: Տեսականօրէն  
արգէն կարող ենք ասել, որ հոգեբանական անձգութիւնը չի կա-  
րող լինել այսուեղ, ուր արուեստ և անհաստական հոգու գրոշմ ըլ-  
կայ: Ժողովրդական հերոսների պատկերներն էլ ստեղծուած են  
մազբանկցարար, ժողովրդի հոգու և ներքին աշխարհի, հայեացք-  
ների համեմատ: Մանրամասնութիւնների մէջ մտնել չենք կարող,  
բայց հէնց Ռուսամի պատկերը միայն բաւական է տեսնելու, թէ  
ճշափ արժանիք ունի ժողովրդական վէպն այդ կողմից (տես  
նաև 8. և 13. պրակները): Նորա խօսքերն ու գործողութիւնները  
միանգամայն համապատասխան են զիխուոր հերոսի անձնաւորու-  
թեան: Ռուսամի արցէն իրեն տասն ու չորսամենայ պատանի ունի  
զիցաղնական յատկութիւններ, նորա ոյժը գերբնական է և գերր-  
անական զօրութեան հոգանաւորութիւնն է վայելում: Գերբնական  
է նորա ձիռու ծագումը և պայտումը է ոչ սովորական ձիերի նման  
(իր. 5—6): Տասնուշորս տարեկան հասակում ահազին ծանրու-  
թեամբ գուրզը հնշառութեամբ ձգել կարող էր (իր. 4), ձին բանե-  
լու ժամանակ նորա ոսները գետնի մէջ են մտնում և ընցկուն  
ինչ զիւթան թալին խող ճղին, ընցկուն զիսող կճզի» (իր. 5).  
բոլոր պատերազմները յաջողութեամբ են պատկառմ, որովհետեւ  
մամնակից է Ռուսամը նա անընկճելի է, բայց նեղումը է միայն  
իւր սերնդի հնատերից (իր. 12, 13), Բայց նորա մարգկային ընտ-  
որութիւնը չի հղուած այս չափազանցութիւններով: Նա հնա-  
գանդ որդի է (իր. 5, 6, 25) և ընթացյա հայր (իր. 4, 12, 13, 15),  
հայրենատէր է և հաւատարիմ պաշտպան իւր թագաւորին (իր. 7,  
11, 15, 25), թէպէտ պատուաէր (իր. 32, 33, 37), անձնուէր  
բարեկամ և պատրաստ օգնութեան հասնելու վտանգի ժամանակ (իր. 17, 18, 23), բնաւորութեամբ ազնիւ և անխարդախ: Նա  
վէպի զիխաւոր հերոսն է, հոգին և ամենայն ինչ նորա շուրջն  
է պտշտում, եթէ նոյն իսկ գէպեհրի մէջ մամնակցութիւն  
չ'ունենայ: Հրաշալի կերպով է նկարուած նորա անփութու-  
թիւնն ու արհամարհանքը գէպի թշնամու ուժերը: Նա խմում է  
և քնում, մինչ նորա շուրջը կատաղի պատերազմ է մղուում: Իր-  
բորդ ազգարարութիւնը լսելուց և զինակցի կեանքի վտանգը  
տեսնելուց յետոյ միայն՝ գործի մէջ է մտնում: Նորա հանգիստ,  
վեհապետական ծանրութեամբ պատրաստութիւնը պատերազմի  
համար, գէմքի նկարագրութիւնը, զէնքերը, ձին, յատկապէս

գուրզը իւր «իրիք խարիք բաթման» ծանրութեամբ, պատշաճ են միանդամայն հերոսի նկարագրին և գործողութիւններին: Նկատուած չափազանցութիւնները ոչ միայն չեն խանգարում ամրագլութեան գեղեցկութիւնը, այլ և ապացոյց են հոգերանական ճշշդութեան և ժողովրդական ճագման: Ժողովրդի մէջ է ստեղծւում վէպը, ժողովուրդն է նորա հեղինակը, ուրիմն և ժողովրդի հայեցքների համեմատ պէտք է կշանք նորա զեղարուեստական ճշմարտութիւնը: Վէպի մէջ նկատուած չափազանցութիւններն ու մեզ համար մնուի երեացող հաւատալիքները ժողովրդի հոգու, համոզումների անմիջական արտայայտութիւններն են: Վէպի հերոսները դիմացակներ են եւ ոչ մեզ նման հասարաւկ մարդիկ: Ռուսամ զերբնական զօրութեան հովանուորութիւնն է զայելում (եր. 4, 5, 23), ուրիմն և անրնական չէ, որ նա գերբնական ոյժ և քաջութիւն ցոյց տայ իւր գործողութիւնների մէջ, Վէպը իւր ամբողջութեամբ, հերոսների մէջ մարմարացած գաղափարներով, զեղցիկ է, ճշմարիս և ընական:

Ռուսամ-Զալի զեղարուեստական արժանաւորութիւններից մէկն էլ նորա կորուկի, կենդանի և պատկերաւոր արտայայտութեան եղանակն է: Մեր ազգային բանուհիւութեան մէջ հեշտ չէ այնպիսի հակիրճ, բայց բանաստեղծական պատկերներով և տեսարաններով նկարագրութիւններ դանել, այն էլ տրամաբանական գեղեցիկ յաջորդականութեամբ, ինչպէս այստեղ, Կարճ նախադասութիւններով կամ պատկերներով կարողանալ շատ բան ասել, նոյն իսկ ասիպել երեակայութեամբ լրացնել այն, ինչ որ չի ասուած, բանաստեղծական կերտուածների ամենամեծ արժանաւորութիւնն է: Եւ Ռուսամ-Զալի ունի այդ արժանաւորութիւնը: բաւական է յիշենք մեր քննութեան նիւթ եղած Գ. զլուխը, յատկապէս առաջին մասը Ընդամենը մի երեսի մէջ այնքան զեղեցիկ և բազմազան տեսարաններով բանաստեղծական պատկերաւոր նկարագրութիւններ և այն էլ այնպիսի երաժշտական ներդաշնակութեամբ, որ կարծեն առաջափական դրուածք էք կարգում, ապացոյց են մեր տեսութեան: Անա այդպիսի օրինակներ:

եր. 19. Կինա աահրանգէն,  
Տըսի շայերքիր շինութի, թի չէ:  
Մազկտիր եղթըրի, թի չէ  
Մէինք ախազուրքիր եղթըր ի,  
Մէա վիրու օչխար կայ մէջ,  
Խաղալ կայ ինի,  
Մինք ա՛հրթանք սէհրանգէն սէհր անիլիւ:

**եր. 20.** Զայիրքիր բիրադի արշացին, ուստի ուստի այս ուր  
Զծաղկառնիր պիւլիւր կոխըցին, մասուն մասունը մասունը  
Զապարքիր բիրադի աւրիցին, ուր ուր ուր ուր ուր ուր ուր ուր  
թող մասախուն էտու վեար սէնրանգինուր ուր մասուն

**եր. 21.** Տառէկրկու խէզգաթ մեաշ քիւ սէնրանգինուր արած ի,  
Խէւաթ ըմ քիւ խէւաթի տեղն ի զարկած,  
Խէւաթ ըմ Ղարամանը խէւաթը տեղն ի զարկած,  
Խէւաթ ըմ Հըմանը խէւաթի տեղն ի զարկած,  
Խէւաթ ըմ Փիրանի խէւաթը տեղն ի զարկած,  
Փալաւանցատիրու տեղ բիրադի խէւաթքիր զարկած ի,  
Զայիրքիր էրքացած ի,  
Զծաղկառիր կոխած ի,  
Զվէրու օշխար սպանած ի,  
Զապարքիր բիրադի աւրած ի,  
Սէնրանգին ըսկուն էրած, թճզ ու մասախուն,  
Ալ աէր չ ճանչնայ,

16.

**Խօսկով Խօստամ-Զալի** պատկերաւոր արտայայտութիւնների մասին, շոշափում ենք նաև նորա լեզուի հարցը վիպական տեսակէտով։ Լեզուն ինքնըստինքեան ժողովրդի ամենամեծ ստեղծագործութիւնն է, բայց վիպական լեզուն աւելի օժտուած է բանաստեղծական յատկութիւններով, քան առօրեայ խօսակցութեան լեզուն։ Դորա պատճառը վէպի նիրինն է։ Վէպը որչափ և առօրեայ կեանքի, նիստ ու կացի հետ կապուած, բայց մի և նոյն ժամանակ ժողովրդի զարգափարական աշխարհի նկարազրութիւնն է։ Բնչպէ վսեմ է զարգափարական կեանքը առօրեայ նիստ ու կացից, այնպէս և վսեմ է զարգափարական կեանքը նկարազրող լեզուն սովորականից։ Վէպը ստեղծագործութեան հետ, ոչչոք է ստեղծուէք և նորա արտայայտութեան համար յատկու լեզու, ընդունակ պատկերացնելու հերուսների կեանքը, զործողութիւններն ու պատկերազմները։ Վէպը ժողովրդի բանաստեղծական պատճութիւնն է, գորանով և պայմանաւորուած է նորա լեզուն, արտայայտութեան եղանակը։ Ժողովրդական վէպի լեզուն պատմական, նկարազրական է, պարզ, անարուեաս, առանց մաքերի խրթնութեան կամ կուտակութեան, կենդանացած բանաստեղծական ոճերով, դարձուածներով, նմանութիւններով։ Այս

կողմից Ռուսամ-Զալի լեզուն օրինակելի է և ոչ պակաս նշանակութիւն պիտի ունենայ հայ ժողովրդական բանահիւսութեան վիզուական լեզուն ուսումնասիրելու համար, քան Սասմայ Շահը իւր վարիանաներով։ Ռուսամ-Զալի վիզուական լեզուի գեղեցիկ նմուշներ կարող են լինել մանաւանդ այն հասուածները, ուր նկարագրուած են Ներուաների սպառազինութիւնը, նոցա մենամարտութիւնները կամ ընդհանուր զօրքերի պատրազմը։ Այդպիսի մի հասուածի հետ ծանօթացանք արդէն Գ. զիսի գեղարուսական վերջուածութեան ժամանակ (եր. 23), ուր նկարագրուած էր Ռուսամի սպառազինութիւնն ու պատրաստութիւնը պատերազմի զարս գալուց առաջ։ Նոյն Ներոսի նման նկարագրութիւններ ունինք, միայն քիչ համառա, 5, 9, 11, 38, 41 երեսներում։ Ներուաներից ոչ ոք, բացի Գևից, այն էլ մի անգամ (եր. 40), չէ արժանացել այզպիսի նկարագրութեան։ Ամեն տեղ միանման կարգաւորութիւն է նկատում չնչին տարբերութիւններով։ Նախ Ներոսը կանգնում է, կապում զէնքերը, կախում շալմաս թուրք, հազնում զզրեխէ շապիկը, զիսին զնում քըզ զրեխը, վերան ձգում ըրբւրքը։ ապա նկարագրում են զէմքի երկու բնորոշ մասերը՝ աշքերն ու ընչացքը։ շացքիր շուռ առից, հըմէն մէ քեան չինու կիթսէ, ըրեղիր օլիբրից, զականջ ընցաւ։ Մենամարտութիւնից առաջ Ներոսի վերայ մի զայրոյթ, բարկութիւն է գալիս և ի նշան այդ բարկութեան ժմազիր կանգնան, զրեխէ շապիկ իտու տիւս եր. 23, 36, կամ բռում է նա սարափ ազգերու համար։ տարի ըմ թեսուից մեխն կինաց, ձէն ընկաւ քետպար, շիւշարանզիր բիրազի կուտրան չնու ձէնից եր. 39, 40։ Ներոսի նկարագրութեան հետ կապում է ձիու զարգերի նկարագրութիւնը։ ապա Ներոսը նստում է և վերցնում իւր ծանր զուրգը, Աստուծոյ անունը տալիս և սկսում իւր կոփւր։ Ներոսի և նորա ձիու նկարագրութիւնը շատ նման է Դաւթի և Քուրիկ-Զալալու նկարագրութեան։

Ներուաները կուռում են գուրզերով, որոնց ծանրութիւնը սովորաբ չիրիք խարիք բաթման է (եր. 13, 23), գուրզերի հարուածների գէմ պաշտպանում են ժմարտալձներով՝ վահաններով (եր. 11, 14, 23), իսկ թշնամուն ձիուց ցած ձգելուց կամ յաղթելուց յետոյ, վիզը կտրում են թրով (եր. 9, 15, 23, 31) կամ զանակով (եր. 7). Թշնամուն բանելու համար պարան են ձգում զզամաքեարբանդը (եր. 15). Որպէս զէնք յիշուած են նաև շնիտ անեղ կամ տոիրկեաւանց, շնէրիդ իսճճարք, բայց քիչ զործածուած։

Մենամարտութեան բանուելուց առաջ միմեանց սպառնալիքներ, հայնոյանքներ կամ ծաղրտկան խօսքեր են ուղղում, կտրուկ և զուտ ժողովրդական գործուածներով. Գեի պատասխանը Թուրանի թափաւորին տեսանք արգէն (եր. 22), Բոստոմի և Զոհրաբի մենամարտութեան ժամանակ հայրը հայնոյում է որդուն և ասում. «Տի, իմացիր իս եկո մեռիր իմ, ափ կեսս իրանայ թալան քի խամար անմիւս. Զոհրաբ պատասխանում է սառց և սպանիչ ծագրով. «Տի մեռուկ իս, ոպ թնչ իս» (եր. 11), Բրզոյի և Ֆէրամազի մենամարտութեան ժամանակ առաջինը զիմում է երկրորդին. «Թա՞քը (հայնոյանք), յերթիր շուրիբն ի...» ևայն, որին Ֆէրամազ պատասխանում է «Եիս եկիր իմ, քիւ խովին անկիրող ա'անիմ» (եր. 14). Մոստամ լրիկով Զաւարէի ձայնը և տեսնելով, որ Ֆիլասը թուրը քաշած պէտք է նորա վիզը կարի, սպանում է. տիւ թուր անիս Էնու վիզ կարիս, եկո ա'ընիմ մէկ զիւրդ զեարկիմ քի, եօթ տապաղէն զեանու տակ մտնիօթ»:

Հերոսների մենամարտութիւնները նկարագրուած են համառոտ, բայց բանաստեղծական հրաշալիք պատկերաւորութեամբ և նմանութիւններով. Եէրկուս առին յիրար, կոռուան. Էրկինք, զետինք խառնուաւ. Էնքան թող էզա զեանուց, էրկնուց իրիս պըռնից, Էնունց գիւրզի ձէն ընկաւ ախշարք (եր. 17).

«Փայլւան էկաւ յիսլիւ անուր (մոստամի), զեարկիցին զիւրզիր մէ մէկու. Էնքան զեորդ կ'զեարկին մէ մէկու. մէկ ըսաց տախշարք աւրաւ Էնունց գիւրզը ձենըրուց», մէկ ըսաց. չչէ, էրկու փալէւան ընկեած մէյզան, կորի կէնինք (եր. 7),

«Լցկուն զեորդ կ'կեայ վըր Բրզո զիւռուն, ընցկուն կարկուտ կեայ էրկնուց» (եր. 18).

«Էնքան զեորդ կ'զեարկին Դիւռն, ըսկուն ինչ տարպին կրուանքսիր կ'զեարկի» (եր. 22).

«Լցկուն զեորդ կ'զեարկին յիրարու, անցկուն ինչ կարկուտ կեայ» (եր. 23):

Գուրզի կամ հերոսի ձայնի քաղցրութիւնը յաջողութեան նշան է. «Թի ափ տեսար իմ զիւրզի ձէն չ'էկաւ, ափ էլ փախի, մտի բիրդ ինիս» (եր. 7); «Գիւռու ձէն անիւշ կ'կեայ կրուու մէջ, քեանի Գիւ սադ ի, ափշար մազի փարէմ չէնիս» (եր. 22).

Մենամարտութիւնից զատ փալիւանները կռւում են խմբերով, մի ցեղը միւսի դէմ, ինչպէս Տիւուի և Պողարզի մները մի-

մեանց դէմ (եր. 16—17) կամ Դոդարզի ցեղը Հըմանի ցեղի դէմ (եր. 35), կամ Իրանի և Թուրանի զօրքերը միմնանց դէմ, Զօրքերի թիւը երբեմն յիշուած է թուերով, որեառուուն թարիւրը, տասւերկու խազարը, «երկու խարիր թարիւրը, բայց աւելի յաճախ գրաններով, որոնց քանակութիւնը աստղերի բազմութեան հետ է համեմատուած, արինակ. և կտենան էնքան չադր ի զարկած վեար ձամբին, քանց աստղ յերկնուց (եր. 7), «Եւրենց չադրքիր զեարկիցին զեալըն, քեանց աստղ երկնուց. աստղին հաշիւ կ'ընը, չադրին չ'ընըց (եր. 37), «Ե՞նչ կ'իրիշին. էնքան ապեար տիմաց քեազքին արիր ի, քեանց աստղ երկնուց (եր. 39):

Զօրքերի ընդարումներն ու պատերազմներ նոյնպէս նկարագրուած են պատկերաւոր, բանաստեղծական: Պատերազմ սկսւած է երաժշատթեամբ և սովորաբար երկեր օր, երկեր զիշեր է տեսում. միշտ յազմում են իրանցիք:

«Մոստամն էլ մօտացաւ, մէկ գեղրզ մ'էզար: Սազիր զարկիցին, թրիր քեշըցին, էրկու թագաւոր առան յիրուր. էնքան մարտ յիրարուց չեարտիցին, էրուն էղաւ գիտ, զջանզաքուիր տարաւ: Իրիր օր իրիր գիշեր զիրարու զեարկիցին, թիւրանայ թագաւոր կուտրաւ, փախաւ (եր. 10):

«Ե՞նչ Ռոստամ կիսաց, սովիր զեարկիցին, էրկու օրդուն կայնան, խասան յիւրուր. էնքան մարտ յիրարուց կ'չեարամին, ընցկուն քեամին զեարկի ծառիրու թաւիր շուռ տայ զեալըն: Էրուն էղաւ զջանզաքուիր կ'ատանըց (եր. 19):

«Էլան չուրա կուշում, յըմէն մէկ եանէն զեացին. անցկուն ինչ զեարնան ամպիր կ'զրգրան, ձէն երկնուց կ'ընի, էնունց նանուուց զեանուուց կընի: Զալ մէկ եանէն էզար, էնքան մարտ մէ մէկից չեարտիցին, էրուն էլաւ լէշիր կ'ատանց: . . . կ'իրիշին կըխին, էրկինք զեարինք խանուում. . . էլան, պիրին սովիր զեարկիցին, էրկու կուշում առից յիրիւր, ախշարք էլաւ թուզ, թուզ էլաւ էրկնուց իրիս պանից. իրիր օր իրիր գիշեր իրարու զեարկիցին, անախում իրարուց չեարտիցինց (եր. 43):

Այս նկարազրութիւններից անկախ Ռոստամ-Զալը հարուստ է ոճերով, զարձուածներով, պատկերաւոր արտայայտութիւններով կամ նմանութիւններով, առաջներով, որոնք լիզուին և՝ կենզանութիւն և բանաստեղծական զեղեցկութիւն են տալիս: Ցիշենք մի քանիսը:

«Մարտ մէկ պղինձ կաթ կթի, էնու մէրան մցի մէշ, չ'ընը մածուն (եր. 6):

«ԵՇէկ խաչք վեսր օտաց չըն թորիկ» (եր. 13);  
 «Սերտ էնու վերայ եռաց» (եր. 13);  
 «Էնի փրթիճիւ շերիկ ի չիւր զիամաթին» (եր. 15);  
 «Էնքան ճխարից, էնու մօր կաթ մատքիր վէ իսու տիւռ»  
 (եր. 15);  
 «Փիրան անիւշ կենայ» (եր. 16);  
 «Սազ ձի խառա պի, որ ձեռ տամ ինէ, խաղար ձէն մօ-  
 տէն ըլնը» (եր. 16);  
 «Թեանի ճիւր իմ աչքիր կայ» (եր. 35);  
 «Թիւ հեռող, քեար էրա» (եր. 38);  
 «Եիս ձե քաղաք տակ տիրիւ ո'էնիմ» (եր. 38);  
 «Էնցիւն ինչ սըրմոր? ինուք դաւ էնի գեախ ճնճղկատիր,  
 անցկուն դաւ էրաւ մեանչ զերիւն» (եր. 40);

## 17.

Մեր թռուցիկ աեսութիւնը թոստամ-Զալի նշանակութեան  
 մասին ամփոփելու համար, անհրաժեշտ էր ցոյց տալ նաև նորա  
 նշանակութիւնը լեզուաբանական տեսակէտով։ Ժողովրդական  
 բանահիւտութեան ամենայն մի նշխար նշանակութիւն ունի գրա-  
 կան լեզուի հարստացման, մշակութեան և զիտնական ուսումնա-  
 սիրութեան համար։ Բանահիւտութեան պատկերաւոր արտայա-  
 առութիւնները, գեղեցիկ գարձուածներն ու ոճերը, բառերը պիտի  
 փոխանցուին հետզհետէ մեր գրական լեզուի մէջ նորան աւելի  
 կենսունակութիւն և ինքնուրոյնութիւն տալու համար։ Հայ բա-  
 նաստեղներն այնտեղից նիւթ և արտայայտութեան եղանակներ  
 պիտի իւրացնեն, անհատական բանաստեղծութիւնն աւելի ազ-  
 գային և ժողովրդական գարձնելու համար։ Թոստամ-Զալն ևս  
 իրք ժողովրդական բանահիւտութեան մի երեսյթ իւր նշանա-  
 կութիւնն ունի։

Բայց այս վէտի ուսումնասիրելի է յատկատէս լեզուարտնա-  
 կան գիտութեան տեսակէտով։ Հայոց լեզուի հնիւնարանութեան և  
 քերականութեան օրէնքների ուսումնասիրութեան համար Մոկաց  
 բարբառը շատ թանգագին նիւթեր է տալիս, որովհետեւ հարուստ  
 է ժողովրդական բանահիւտութեան այլ և այլ տեսակներով, և  
 մինչև այժմ մաքուր մնացած օտար ազգեցութիւնից, մանաւունդ  
 որ լեզուարանական քննութեան վի հնիւթագուել դեռ Այս խընդ-  
 րով յոյս ունինք մի այլ անդամ զրադուել, երբ հրատարակու-  
 թեան կ'առանք մեր ձեռքի տակ եղած մնացած նիւթերը։

18.

Թոստամ-Զալը զրի ևնք տռել 1890 թուին Մայր աթոսի  
մեմարանում: Այդ տարին մեմարանում զիշերապահութեան պաշ-  
տօն էր կատարում Մովկաց Նորաւանց գիւղացի Ռւստենց Յեղանը,  
ժողովրդական բանահիւութեան մի կենդանի շատեմարան: «Փշրանք-  
ների» նիւթի մի մասը՝ «Ալուն աղիք առաջին վարիանաը (եր.  
3), «Մովկաց Միրզէն» (եր. 19), «Մեսաւ էն ինչ շատ մալ ունէր»  
(եր. 21), «Ծնեացէք, ուրախացէք» (եր. 23) և այլո մնացած եր-  
գերն ու առակները մինչև 31 երես Նորաւանից ենք զրի տռել նաև  
Թոստամ-Զալը: Յեղանը զարմանալի ընդունակութիւն ունէր  
պատմելու համար. հետո աւելորդաբանութիւնից, համառօտ և  
կենդանի լեզուով: Նա կլինէր մօտաւորապէս յիառն տարեկան.  
կազ էր, այդ պատճառով էլ շատերի կողմից սկազ Յեղանը կո-  
չուած, բայց որտոտ և կտրին: Կարգալ և զրել չ'զիսէր, բայց  
իւր պանդուխտ հայրենակիցների շրջանում համարում էր որպէս  
բանիմաց մարդ: Մի քանի տարուց ի վեր վախճանուած է արդէն  
իւր հայրենի զիւղում:

5 Նոյեմբ. 1904

Երեման

